հիմնադրամի իրավաբանական կուրսի ուսանող

**ՃՈՒՑՄՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՃՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍ  
ՏՈՒԺՈՂԻ ՇԱՀԵՐԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱԿԸՆԴՊԵՄ ՀԱՐՅՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՈՄԱՆ ՄԻՋՈՑ**

Անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական վարույթի իրականացումն ունի որոշակի բարդություններ, ինչը պայմանավորված է երկու հակադիր սահմանադրաիրավական արժեքների, մասնավորապես՝ մի կողմից մեղադրյալի իրավունքների և մյուս կողմից՝ անչափահաս տուժողի շահերի պաշտպանության, այդ թվում՝ անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ: Գործնականում անհրաժեշտ է մի կողմից ապահովել մեղադրյալի մեղավորության ապացուցման բարձր չափանիշների սահմանումը կամ կիրառումը, նրա իրավունքների առավելագույն պաշտպանությունը, մյուս կողմից՝ ապահովել խոցելի վիճակում գտնվող անչափահաս տուժողի անվտանգությունը՝ նվազագույնի հասցնելով քրեական վարույթին նրանց մասնակցությամբ պայմանավորված կրկնակի հոգեբանական տառապանքները:

Բացի այդ, անչափահաս տուժողների մասնակցությամբ իրականացվող քրեական վարույթի բարդությունն առնչվում է նաև ապացուցողական գործունեությանը: Հայտնի է, որ նման վարույթներով անչափահաս տուժողները խիստ խոցելի են, շատ դեպքերում առանց ծնողական խնամքի երեխաներ են, ովքեր հաճախ այս կամ այն ազդեցության արդյունքում փոխում են իրենց ցուցմունքները: Նման հակասական ցուցմունքների առկայության պարագայում բարդանում է հանցագործության իրա-

կան հանգամանքների վերհանման գործընթացը: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նման տեսակի հանցագործություններով մեղադրանքի հիմքում հնարավորության դեպքում պետք է դրվեն ոչ միայն անչափահաս տուժողների ցուցմունքները, այլև ընթացքի մեջ գտնվող հանցագործության փաստն օբյեկտիվորեն արտացոլող ապացույցները, օրինակ՝ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցներ, որոնց միջոցով ամրագրվում է կատարվող հանցագործության ընթացքը:

Հատկապես սեռական հանցագործությունների զոհ հանդիսացող անչափահաս երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ առանձին պետությունների քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսվում են դատավարական կառուցակարգեր, որոնք կոչված են ապահովելու երեխայի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը:

Այսպես՝ Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 224-րդ հոդվածի 9-րդ կետի 5-րդ պարբերության համաձայն՝ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթով նախկինում հարցաքննված երկու և ավելի անձանց ցուցմունքների միջև հակասությունները լուծե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ղամբարյան, «Վետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումներն իրավական ռեալիզմի հարթությունում»: «Օրինականություն», 2013, թիվ 79, էջեր 14-26, Ա. Ղամբարյան, Դ. Թումասյան «Թրաֆիքինգի կամ շահագործման անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները (մինչդատական վարույթ): Ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար»: Երևան, 2014:

լու նպատակով փոքրահասակ կամ անչափահաս երեխայի ու կասկածյալի միջև հարցաքննություն չի կարող անցկացվել:

Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ դատարանն իրավասու է անչափահասին չհրավիրելու դատարան և թույլատրելու որպես ապացույց ներկայացնել նախաքննության ընթացքում տված տվյալները, եթե՝

1. պաշտպանության կողմը հնարավորություն է ունեցել նախաքննության ընթացքում հարցեր տալու վկային,

2. եթե վկան 10 տարեկանից փոքր է, իսկ հարցաքննությունը կվնասի նրա հոգեբանությանը,

3. եթե վկան փոքր է 14 տարեկանից, իսկ հարցաքննությունը վերաբերում է սեռական հանցագործություններին:

Սեռական հանցագործության զոհ անչափահասին դատարանում առերես (դեմ առ դեմ) հարցաքննելու հարցին անդրադարձել է ԱՄՆ գերագույն դատարանը: Այսպես, 1988 թվականին *Coy v. Iowa* գործով Գերագույն դատարանը գտել է, որ խախտվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ սեռական հանցագործության երկու զոհերը հարցաքննվել են միակողմանի տեսակապի միջոցով՝ պաշտպանիչ էկրանի հետևում, որի պայմաններում երեխաները չեն տեսել մեղադրյալին, իսկ մեղադրյալը ոչ պարզ տեսանելի պայմաններում է հետևել հարցաքննությանը: Մեղադրյալը բողոքարկել է, որ պաշտպանիչ էկրանի կիրառմամբ երեխաների հարցաքննությամբ խախտվել է դեմ առ դեմ՝ հակընդդեմ հարցման իրավունքը: ԱՄՆ գերագույն դատարանը նշված գործով հաստատել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտման փաստը և սահմանել, որ հակընդդեմ հարցումը պետք է իրականացվի դեմ առ դեմ: Սակայն երկու տարի անց ԱՄՆ գերագույն դատարանը *Maryland v. Craig* գործով վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն: ԱՄՆ գերագույն դատարանն ուժի մեջ է թողել Մերիլենդ նահանգի օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝ դատավորը հնարավորություն

ունի երեխայի հարցաքննությունն իրականացնելու միակողմանի տեսակապի միջոցով: Այս դեպքում երեխան, դատախազը և մեղադրյալի փաստաբանը գտնվել են առանձին սենյակում, իսկ դատավորը, երդվյալ ատենակալները և մեղադրյալը՝ դատական նիստերի դահլիճում: Երեխան ուղղակի և առերես հարցաքննության է ենթարկվել առանձին սենյակում, իսկ դատական նիստերի դահլիճում գտնվող դատավարության մասնակիցները հարցաքննությանը հետևել են տեսակապի միջոցով<sup>2</sup>:

Կանադայի գերագույն դատարանը անդրադարձել է սեռական հանցագործություններով անչափահաս երեխաների՝ մինչև դատարանը տված ցուցմունքների թույլատրելիությանը: Այսպես՝ *Ռ-ն ընդդեմ Խանի ((1990) 2 S.C.R. 531)* գործով Կանադայի գերագույն դատարանը նշել է, որ գործը քննող դատավորը թույլ է տվել դատական սխալ՝ արգելելով սեռական ոտնձգության երեք ու կես տարեկան զոհին առանց երդման վկայություն տալ, ինչպես նաև այն, որ դատավորը թույլ չէր տվել մեղադրանքի կողմին ներկայացնելու սեռական ոտնձգության ենթարկվելուց 15 րոպե հետո երեխայի՝ իր մայրիկին տված վկայությունը: Եթե առանց երդման տրված վկայությունը չէր կարող օգտագործվել, ապա կստեղծվեր մի վտանգավոր իրավիճակ, որի դեպքում փոքր երեխաների հանդեպ սեռական հանցանքներով հնարավոր չի լինի իրականացնել հետապնդում: Երեխայի մայրիկի ցուցմունքի առնչությամբ Կանադայի գերագույն դատարանը գտել է, որ կարելի է դրսևորել «ասեկոսե» ապացույցի վերաբերյալ ավելի ճկուն, բայց «սկզբունքային» մոտեցում: Անկախ զգուշության կարիքից, «ասեկոսե» ապացույցը կարող էր ընդունվել, եթե բավարարված էին երկու հիմնական պահանջները՝ անհրաժեշտությունը և արժանահավատությունը: Վկայության արժանահավատությունը պետք է որոշել դրա կարևորությամբ և ցանկացած լրացուցիչ հաստատող ապացույցի որակով: Մեկ այլ՝ *Խան և Սմիթ գործով (([1996]) 3 S.C.R. 829)* Կանադայի գերագույն դատարանը նշել է, որ գործը քննող յուրաքանչյուր խելամիտ դատավոր անհրաժեշտ կգտներ ընդունելու

<sup>2</sup> Տե՛ս Jessica Smith, Remote Testimony and Related Procedures Impacting a Criminal Defendant's Confrontation Rights. Administration of Justice Bulletin. N. 2013/02.



հինգ տարեկան երեխայի մինչդատական ցուցմունքները, որոնցում նա գանգատվում է, որ իրեն ենթարկել են սեռական ոտնձգության: Դատարանը գտել է, որ բողոքարկողի դեմ հարուցված գործը ծանրակշիռ է. երեխայի ցուցմունքներն ամբողջությամբ կայուն էին և հաստատված էին բժշկական հետազոտությամբ, հարձակումից հետո երեխայի մոտ ի հայտ եկած վարքագծի փոփոխություններով և բողոքարկողի կողմից հանցանքը կատարելը հերքող որևէ ճշմարտանման բացատրության բացակայությամբ<sup>3</sup>:

Թեև սեռական հանցագործություններով անչափահաս տուժողների պաշտպանության ժամանակակից մոտեցումներն ինքնին ընդունելի են, սակայն դրանք առնչվում են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված՝ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման հարցին:

Այսպես՝ Պ.Ս.-ն ընդդեմ Գերմանիայի գործով (2001 թվականի դեկտեմբերի 20) ութամյա Ս.-ի հայրը 1993 թվականի ապրիլի 29-ին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն այն մասին, որ երաժշտության ուսուցիչն անհատական դասի ընթացքում երեխայի նկատմամբ իրականացրել է սեռական ոտնձգություն: Ոստիկանները հարցաքննել են անչափահաս Ս.-ին և նրա մորը: Ս.-ն հաստատել է հոր հաղորդումը, իսկ մայրը ցուցմունք է տվել այն մասին, որ երաժշտության անհատական դասերից հետո երեխան անհանգիստ է եղել, իսկ հետագայում իրեն պատմել է սեռական ոտնձգության մասին: Ներպետական դատարանը, հիմք ընդունելով Ս.-ի մայրիկի և Ս.-ին հարցաքննած ոստիկանի ցուցմունքը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից նշանակված հոգեբանական փորձաքննության՝ Ս.-ի պատմածի արժանահավատության վերաբերյալ հոգեբանի եզրակացությունը, դիմողին մեղավոր է ճանաչել անչափահաս երեխայի նկատմամբ սեռական հանցագործություն կատարելու մեջ: Ս.-ի ծնողները հրաժարվել են երեխային ներկայացնել դատարան, քանի որ երեխան ոտնձ-

գության հետևանքով ձեռք էր բերել նեյրոդերմիտ հիվանդություն, և առկա էր նրա առողջական վիճակի վատթարացման վտանգ: Ներպետական դատարանները թեև նշել են, որ դատարանում Ս.-ի հարցաքննության բացակայությունը էական բացթողում է, սակայն նրան չեն հրավիրել դատարան՝ հիմք ընդունելով երեխայի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքը և հոգեբանի եզրակացությունն, ըստ որի՝ դատարան ներկայանալու դեպքում կատարվածը վերհիշելու պատճառով երեխայի հոգեբանական վիճակը կրկին կվատթարանա:

Այս գործով Եվրոպական դատարանը նշել է, որ անչափահաս վկաների, մասնավորապես՝ սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի մասնակցությամբ իրականացվող քրեական դատավարության ընթացքում պետք է հաշվի առնել նրանց շահերի պաշտպանությունը, սակայն հաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ առաջին ատյանի դատարանը մերժել է երեխային հոգեբանական փորձաքննության ենթարկելու միջնորդությունը, իսկ վերաքննիչ դատարանը այդ փորձաքննությունը նշանակել է դեպքից ութ ամիս անց: Բացի այդ, Ս.-ի ցուցմունքները հանդիսացել են դիմողի դատապարտման միակ ուղղակի ապացույցը:

Ինչպես նկատում ենք, նշված ոլորտում անչափահաս տուժողի և մեղադրյալի շահերի զուգակցումը բարդ է, ինչը հանգեցնում է հակասական մոտեցումների և պրակտիկայի ձևավորմանը:

Սույն հոդվածում կներկայացվեն անչափահաս տուժողների կրկնակի վիկտիմիզացիայի կանխարգելման վերաբերյալ միջազգային փաստաթղթերում արտացոլված մոտեցումները, այնուհետև կքննարկվի անչափահաս տուժողի և մեղադրյալի շահերի զուգակցման նպատակով տուժողի նախաքննական ցուցմունքների դեպոնացման կառուցակարգի կիրառելիության հարցը:

Մասնավորապես, անչափահաս տուժողների կրկնակի վիկտիմիզացիայի կանխարգելման հիմնական եղանակը երեխայի մասնակցությամբ կատարվող նույնաբովանդակ դա-

<sup>3</sup> Որոշումները մեքերված են ըստ՝ Ալ-քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (57-60 կետեր):

տավարական գործողությունները սահմանափակելն է: Այսպես՝ Եվրոպայի Խորհրդի «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը նախատեսում է, որ երեխայի հարցաքննությունների թիվը հնարավորինս սահմանափակվի այնքանով, որքանով խիստ պահանջվում է քրեական վարույթի նպատակով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ «յուրաքանչյուր կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ տուժողի կամ, անհրաժեշտության դեպքում, վկայություն տվող երեխայի հետ բոլոր հարցազրույցները հնարավոր լինի ծայնագրել տեսաերիզի վրա, և հնարավոր լինի այդ բոլոր ձայնագրված հարցազրույցները որպես վկայություն ընդունել վարույթի ժամանակ՝ իր ներպետական իրավունքով սահմանված կանոնների համաձայն»: Այնուհետև, նույն կոնվենցիան, շարունակելով առաջադրված դրույթը, 36-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսում է, որ «յուրաքանչյուր կողմ, իր ներպետական իրավունքով նախատեսված կանոններին համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողը կարողանա ցուցմունք տալ դատարանում առանց իր ներկայության, մասնավորապես, համապատասխան հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով: Անչափահաս երեխային դատարանում կրկնակի հարցաքննության անթույլատրելիության մասին դրույթներ առկա են նաև միջազգային այլ փաստաթղթերում: Եվրոպայի Խորհրդի «Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի ապահովման մասին» 10.09.1997թ. N R (97) 13 հանձնարարականի 25-րդ կետի համաձայն՝ խոցելի վկաներին (անչափահաս վկաներ, ընտանեկան բռնության զոհեր) պետք է հարցաքննել քրեական վարույթի առավել վաղ փուլում՝ հանցագործության փաստը հաշվառելուց անմիջապես հետո: Հարցաքննությունը չպետք է կրկնվի:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գոր-

ծողությունների ուղենիշների (առաջարկվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 1997/30 բանաձևով) 49-րդ կետի համաձայն՝ տարբեր իրավական ավանդույթներին, պրակտիկային և իրավական շրջանակներին համապատասխան՝ քննության և քրեական հետապնդման, ինչպես նաև դատական լուսմների ընթացքում հարկավոր է հնարավորինս խուսափել տուժող երեխայի և իրավախախտի ուղղակի շփումից<sup>4</sup>:

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների (բանաձև 2005/20) 31-րդ կետի համաձայն՝ մասնագետները պետք է նաև իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք.

ա) կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լուսմների և, հատկապես, արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ.

բ) եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով, կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման համար մեղադրվող անձի կողմից հարցաքննվելիս՝ միաժամանակ հարգելով երեխայի՝ պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաներին պետք է հարցաքննել (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման համար մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում. պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասարաններ և մեկուսի հարցաքննության տարածքներ.

գ) կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ՝ նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով<sup>5</sup>:

<sup>4</sup> Տե՛ս «Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու», Երևան, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012 թվական, էջ 121:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 107:

Համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ քրեական արդարադատության ոլորտում ներգրավված անչափահաս երեխաների շահերից բխում է նրանց մասնակցությամբ կատարվող նույնաբնույթ դատավարական գործողությունների թվաքանակի հնարավորինս սահմանափակման անհրաժեշտությունը: Նման պայմաններում ի հայտ է գալիս անչափահաս տուժողների ցուցմունքները դատարանում անմիջականորեն հետազոտելու և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելու խնդիրը: Ժամանակակից քրեական դատավարությունում կիրառվում է մինչդատական վարույթում ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտը՝ որպես անչափահաս տուժողի շահերի և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի հավասարակշռման միջոց:

«Քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսված է ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտը (գլուխ 42): Նախագծի 312-րդ հոդվածի համաձայն՝ ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է՝

1) մեղադրյալի խոստովանական ցուցմունքի պատշաճությունն ապահովելու նպատակով՝ քննիչի միջնորդությամբ.

2) դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում այդ անձից պատշաճ ցուցմունք ստանալու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ:

Նախագծով ուղղակիորեն նախատեսված չէ անչափահաս տուժողների ցուցմունքների դատական դեպոնացման հնարավորություն միայն այն հիմքով, որ տուժողն անչափահաս է: Մինչդեռ մի շարք միջազգային փաստաթղթերում և առանձին երկրների քրեական դատավարություններում նախատեսված է անչափահաս տուժողների ցուցմունքների դատական դեպոնացման հնարավորություն: Այսպես՝ Եվրոպայի Խորհրդի «Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի ապահովման մասին» 10.09.1997թ. N R (97) 13 հանձնարարականի 26-րդ կետի համաձայն՝ խոցելի վկաների (անչափահաս վկաներ, ընտանեկան բռնության զոհեր) հարցաքննությունը պետք է իրա-

կանացվի կամ դատական իշխանության մարմինների կողմից կամ նրանց ներկայությամբ, իսկ պաշտպանության կողմը պետք է բավարար հնարավորություն ունենա վիճարկելու այն:

Այս դրույթը, ըստ էության, վերաբերում է մինչդատական վարույթում անչափահասների ցուցմունքների դատական դեպոնացմանը, քանի որ անչափահասի ցուցմունքը տրվում է մինչդատական վարույթի ընթացքում՝ դատարանի ներկայությամբ կամ մասնակցությամբ, որին կարող է մասնակցել նաև պաշտպանության կողմը: Արտասահմանյան մի շարք երկրների քրեական դատավարության օրենսդրությունը հատուկ կարգավորում է անչափահաս տուժողների ցուցմունքների դեպոնացման ընթացակարգը (այս մասին ստորև):

Թեև Նախագծում ուղղակիորեն նախատեսված չէ անչափահաս տուժողների ցուցմունքների դատական դեպոնացման հիմք, սակայն նրանց օրինական շահերը և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը զուգակցելու նպատակով պետք է անչափահաս տուժողի ցուցմունքի դատական դեպոնացումն իրականացնել Նախագծի 312-րդ հոդվածի 2-րդ հիմքով, այն է՝ անձը հնարավորություն չունի ներկայանալու դատաքննությանը: Բանն այն է, որ միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ պետք է խուսափել հատկապես սեռական շահագործման զոհ հանդիսացող անչափահաս տուժողներին դատարան հրավիրելուց և կրկնակի հարցաքննելուց: Ինչպես նշվել է, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ պետք է ապահովել, որ տուժողների և հանցագործություն կատարած անձանց միջև շփումը դատարանում և իրավապահ մարմնի տարածքում տեղի չունենա, եթե այլ բան չեն նախատեսում իրավասու մարմինները՝ ելնելով երեխայի շահերից, կամ երբ նման շփում պահանջվում է նախաքննության կամ վարույթների նպատակներով:

Մինչդատական վարույթում անչափահաս տուժողի ցուցմունքի դատական դեպոնացման դեպքում երեխան դատարանի ներկայությամբ տալիս է ցուցմունք և ազատվում հետագայում դատարան ներկայանալու և նույնաբովանդակ

ցուցմունք տալու պարտականությունից: Դատարանը պետք է ապահովի ցուցմունքի դեպոնացման ընթացքում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը: Կողմերի հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման հնարավորության ապահովման նպատակով՝ միջնորդությանը պետք է կցել այն նյութերը, որոնք կնպաստեն նման իրավունքի իրականացմանը: Տրամադրվող նյութերը ներառում են ցուցմունք տվող անձի տվյալները, վերջինիս՝ քրեական վարույթի շրջանակներում կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը, հնարավոր հարցերի շրջանակը, նախկինում տված ցուցմունքները և այլ հարակից տեղեկատվությունը: Դեպոնացման օրը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի վարույթի մասնակիցների կողմից հակընդդեմ հարցումներ անելուն նախապատրաստվելու համար անհրաժեշտ ժամանակը:

Անչափահաս տուժողի ցուցմունքների դատական դեպոնացման դեպքում հարցաքննությանը կարող են մասնակցել նաև հակընդդեմ հարցման իրավունք ունեցող մեղադրյալը և պաշտպանը: Եթե իրավիճակն այնպիսին է, որ անչափահաս տուժողի ցուցմունքների դատական դեպոնացմանը մեղադրյալի մասնակցությունը վտանգում է անչափահաս տուժողի օրինական շահերը, ապա պետք է քննարկել լուծումների հետևյալ տարբերակները.

1. տուժողի ցուցմունքների դատական դեպոնացմանը մասնակցում է միայն մեղադրյա-

լի պաշտպանը: Այս տարբերակը կարող է կիրառվել այն դեպքում, երբ մեղադրյալը համաձայն է չմասնակցելու անչափահաս տուժողի ցուցմունքի դատական դեպոնացմանը:

2. Եթե մեղադրյալը պահանջում է, որ ցուցմունքի դեպոնացման ժամանակ անձամբ իրականացնի հակընդդեմ հարցման իրավունքը, ապա քննիչը պետք է քննարկի դեպոնացումը տեսակապի միջոցով իրականացնելու հնարավորության հարցը<sup>6</sup>: Այս դեպքում մեղադրյալը, նրա պաշտպանը կգտնվեն դատական նիստի դահլիճին հարակից սենյակում, իսկ քննիչը, դատավորը և տուժողը՝ դատական նիստերի դահլիճում: Մեղադրյալը և պաշտպանը տեսակապի միջոցով կարող են լսել ու տեսնել երեխայի հարցաքննությունը և քննիչի միջոցով երեխային տալ հարցեր: Այս գործընթացը պետք է տեսագրվի:

Եվրոպական դատարանը գնահատել է նշված միջոցառման իրավաչափությունը: Այսպես, *Ակկարդին և այլոք ընդդեմ Իտալիայի* (N 30598/02 բողոք) գործով դիմողները երկու փոքրահասակ երեխաների մայրերն են և նրանց հետ կենակցողները: Նրանց դեմ հարուցվել է քրեական գործ՝ երկու փոքրահասակ երեխաների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար: Վեց ու կես տարեկան երեխաները հարցաքննվել են միայն նախաքննության ընթացքում: Դատարանի մեղադրական դատավճռի հիմքում առավելապես դրվել են երեխաների նախաքննական տեսա-

<sup>6</sup> ՀՀ քր. դատ. օր.-ի նախագիծն առաջին անգամ սահմանում է քննչական գործողությունների կատարման ժամանակ տեսակապի օգտագործման դատավարական կարգ: Բացառիկ դեպքերում, եթե օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով քննչական գործողության կատարումն անհնար է, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսակապի միջոցով: Տեսակապի միջոցով քննչական գործողության ընթացքում պետք է երաշխավորվի, որ քննիչը և այլ վայրում գտնվող քննչական գործողության մասնակիցները հստակ տեսնեն և լսեն միմյանց: Տեսակապի միջոցով քննչական գործողությունը սկսելուց առաջ քննիչը պետք է հայտարարի՝ 1) քննչական գործողության կատարման տեղը, օրը և ժամը, ինչպես նաև տեղեկություններ, թե որ վարույթով է կատարվում տվյալ քննչական գործողությունը. 2) քննչական գործողությունը կատարող քննիչի անունը, ազգանունը, պաշտոնը. 3) այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարման օժանդակող իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը. 4) քննչական գործողության ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները: Այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարման օժանդակող անձն ապահովում է քննչական գործողության մասնակիցների ինքնության ստուգումը: Քննչական գործողության ավարտին քննիչը այդ գործողության մասնակիցներին հարցնում է, թե արդյո՞ք ունեն առարկություններ քննչական գործողության կատարման կարգի կամ ընթացքի վերաբերյալ, և դրանց առկայության դեպքում խնդրում է բարձրաձայն ներկայացնել դրանք: Քննչական գործողության ավարտին քննիչը կազմում է քննչական գործողության արձանագրություն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի պահանջների պահպանմամբ: Քննչական գործողության արձանագրությունը ստորագրում են քննիչը և նրա հետ նույն վայրում գտնվող մասնակիցները: Տեսակապի միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսագրության էլեկտրոնային կրիչի (ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի 221-րդ հոդված):

գրված ցուցմունքները, և դատարանում այն անձանց տված ցուցմունքները, որոնց երեխաները պատմել էին առերևույթ հանցագործության մասին: Վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը այն պատճառաբանությամբ, որ երեխաների ցուցմունքներն ընդհանուր առմամբ համընկնում են և տրամաբանված են, նրանք գտնվել են հոգեբանների հսկողության ներքո, իսկ հոգեբանները նույնպես հարցաքննվել են նախաքննության ընթացքում: Եվրոպական դատարանը որոշել է, որ բացակայում է Կոնվենցիայի խախտումը, քանի որ ձեռնարկված բոլոր միջոցառումները բավարար են եղել կանխելու դիմողների իրավունքների խախտումները: Եվրոպական դատարանը նշել է, որ նախաքննության ընթացքում երեխաների հարցաքննությունն իրականացրել է քննչական դատավորը՝ հոգեբանի մասնակցությամբ: Մեղադրյալները, նրանց պաշտպանները և դատախազը գտնվել են կիսաթափանցիկ սպակիով առանձնացված հարակից սենյակում և կարող էին լսել ու տեսնել հարցաքննությունը: Պաշտպանները կարող էին դատավորի միջոցով հարցեր տալ երեխաներին: Հարցաքննությունը տեսագրվել է, որը հետազոտվել է գործն ըստ էության լուծող դատավորի կողմից:

3. Անչափահաս տուժողի ցուցմունքի դատական դեպոնացման ժամանակ բացառել մեղադրյալի մասնակցությունը, իսկ նրա՝ հակընդդեմ հարցման իրավունքն ապահովել միջնորդավորված եղանակով: Այսպես՝ տուժողի ցուցմունքի դատական դեպոնացման ժամանակ պետք է կիրառել տեսաձայնագրում<sup>7</sup>: Ցուցմունքի տեսաձայնագրումը հետագայում պետք է ներկայացնել մեղադրյալին և պաշտպանին՝ հնարավորություն ընձեռելով տալու այն հարցերը, որոնք անհրաժեշտ են պաշտպանության իրավունքի իրականացման համար: Նշված հարցերը հետագայում կրկին դատական դեպոնացման ընթացակարգի շրջանակներում կներկայացվեն տուժողին:

Եվրոպական դատարանը գնահատել է

նշված միջոցառման իրավաչափությունը: Այսպես՝ Եվրոպական դատարանը *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի* գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը պահանջում է, որպեսզի բոլոր դեպքերում հարցերը տրվեն անմիջականորեն մեղադրյալի և պաշտպանի կողմից»: Այս գործում արտահայտված իրավական դիրքորոշումը ճիշտ գնահատելու համար պետք է հաշվի առնել գործի հանգամանքները: Այսպես՝ դիմողը անչափահաս Մ.-ի դեմ սեռական հանցագործության մեղադրանքով դատապարտվել է 8 ամիս ազատազրկման: Սույն գործով մեղադրական դատավճռի հիմքում ընկած է եղել առավելապես Մ.-ի ցուցմունքները և դրանց տեսաձայնագրությունները: Մ.-ին իրենց տանը հարցաքննել է ոստիկանը: Դիմողի փաստաբանը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, քանի որ Մ.-ի փաստաբանը նույնպես չէր կարող մասնակցել այդ գործողությանը: Սակայն դիմողի փաստաբանը նախօրոք ձևակերպել է իր հարցերը, որոնք ոստիկանի կողմից ներկայացվել են Մ.-ին: Հետագայում փաստաբանը հարցաքննության ձայնագրությունների հիման վրա հաստատել է, որ հարցաքննության ընթացքում շոշափվել են այն հարցերը, որոնք ինքը կցանկանար ներկայացնել: Մ.-ն դատարանում ցուցմունք չի տվել: Դատական քննության ընթացքում վերարտադրվել են Մ.-ի առաջին հարցաքննության ձայնագրությունները և արձանագրությունները: Դիմողը դատաքննության ընթացքում չի միջնորդել, որպեսզի Մ.-ն անձամբ մասնակցի դատավարությանը: Դատարանը նշել է, որ այս գործով կարելի է ընդունել դիմողի պնդումն այն մասին, որ նա ձեռնպահ է մնացել Մ.-ին դատարան կանչելու և անձամբ նրան հարցաքննելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց, քանի որ այդպիսի միջնորդությունը կմերժվեր: Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանության աշխատակցի հետ Մ.-ի երկրորդ զրույցը տեղի է ունեցել դիմողի փաստաբանի միջ-

<sup>7</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը սահմանում է, որ քննչական գործողության ընթացքն ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կարող են կատարվել ձայնագրում, տեսագրում, լուսանկարում, պատրաստվել հետքերի ձեփապատճեններ և դրոշմվածքներ: Տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ այդ մասին պետք է նախօրոք տեղյակ պահվեն քննչական գործողությանը մասնակցող անձինք:



նորոգությամբ, որը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը և այդ կապակցությամբ առարկություն չի ունեցել: Նա չի միջնորդել, որ հարցաքննությունը հետաձգվի կամ էլ տեսագրվի, մինչդեռ պաշտպանը նման հնարավորություն ունեցել է: Ավելին՝ փաստաբանը հնարավորություն է ունեցել ոստիկանի միջոցով տուժողին տալու հարցերը և բավարարված է եղել հարցերի պատասխաններով: Սույն գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել<sup>8</sup>:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշների 50-րդ կետում նույնպես նախատեսված է, որ պետություններն անհրաժեշտության դեպքում պետք է քննարկեն դատարանում երեխայի ցուցմունքների տեսագրումը և տեսագրված ցուցմունքը, ի թիվս այլ միջոցների, որպես պաշտոնական ապացույց ներկայացնելը թույլատրելու կապակցությամբ<sup>9</sup>:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 58ա պարագրաֆի համաձայն՝ ցուցմունքը պետք է տեսաձայնագրվի, եթե հարցաքննվում է 16 տարին չլրացած՝ հանցագործությունից տուժած անձը, կամ առկա է վտանգ, որ վկան չի կարող հարցաքննվել դատաքննությանը, իսկ ձայնագրառումն անհրաժեշտ է ճշմարտությունը բացահայտելու համար:

Սեռական բնույթի հանցագործությունների, ընտանեկան բռնության և երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով երեխայի նկատմամբ հնարավոր հոգետրավմատիկ ազդեցությունը բացառելու նպատակով Մոլդովայում և Ղազախստանում նախատեսված է մինչև 14 տարեկան երեխաների ցուցմունքների դեպոնացման հնարավորություն (Միլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 110.1 հոդվածի 1-ին մաս, Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին մաս):

Անչափահաս տուժողի ցուցմունքը դեպոնացնելու իրավական կարգավորման հարուստ փորձ ունի Ամերիկայի Միացյալ Նահանգները, որի առանձին նահանգների օրենսդրությամբ հատուկ կարգավորվում են անչափահաս տուժողների և հատկապես՝ սեռական հանցագործության զոհերի ցուցմունքի դեպոնացման ընթացակարգերը: Այսպես՝ Վիսկոնսինի նահանգի քրեական դատավարության կանոնների (7)(a)<sup>10</sup> կետի համաձայն՝ քրեական վարույթի ընթացքում կողմերից մեկը կարող է դիմել դատարան՝ երեխայի ցուցմունքները տեսաձայնագրելու միջոցով դեպոնացնելու միջնորդությամբ: Ծանուցագրերը ստանալուց և լսումներից հետո դատարանը կարող է թույլատրել նման դեպոնացումը, եթե մինչև դատաքննությունը կամ դատական լսումները.

1. չի լրացել երեխայի 12 տարին կամ,
2. չի լրացել երեխայի 16 տարին, և դատարանը գտնում է, որ 7(b) կետով նախատեսված արդարադատության շահերը պահանջում են, որ երեխայի ցուցմունքները ձայնագրվեն՝ դատաքննության կամ այլ դատական լսման ընթացքում օգտագործվելու նպատակով:

Նույն կանոնների 7(b) կետի համաձայն՝ արդարադատության շահը որոշելիս դատավորը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

1. երեխայի տարիքը, զարգացման մակարդակը և իրադարձությունները հասկանալու ու դրանք խոսքերով վերարտադրելու ունակությունը.
2. երեխայի ընդհանուր ֆիզիկական և մտավոր առողջությունը.
3. արդյոք այն իրադարձությունները, որոնց վերաբերյալ երեխան տալու է ցուցմունքներ, վերաբերում են երեխայի կամ այլ անձի նկատմամբ իրականացված հանցավոր կամ հակասոցիալական վարքագծին, և արդյոք վարքագիծը հանդիսացել է սեքսուալ բռնություն, դրա տևողությունը, դրա հետևանքով հասցված

<sup>8</sup> Տե՛ս «Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года». Науч. ред.-сост. Ю. Ю. Берестнев, М. В. Виноградов. Перевод с англ. В. А. Власихина. М. 2004. с. 118.

<sup>9</sup> Տե՛ս «Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու», Երևան, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012 թվական, էջ 121:

<sup>10</sup> Տե՛ս Wisconsin Codes Chapter 967. Criminal procedure - general provisions. 967.04 Depositions in criminal proceedings.(1983 Wisconsin Act 197). <http://docs.legis.wisconsin.gov/statutes/statutes/967/04> (20.11.2014).

ֆիզիկական կամ զգայական վնասի աստիճանը.

4. երեխայի՝ խնամակալության ներքո գտնվելը, նրա ընտանիքի անդամների վերաբերմունքը վերոնշյալ վարույթի և այն իրադարձությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ երեխան տալու է ցուցմունք.

5. երեխայի ընտանեկան կամ զգայական հարաբերությունները վարույթին ներգրավված անձանց հետ.

6. նախկինում կատարված հարցազրույցների վերաբերյալ երեխայի արձագանքը կամ դիրքորոշումը.

7. արդյոք երեխան մեղադրում է ինքն իրեն տեղի ունեցած իրադարձությունների համար, կամ արդյոք որևէ անձ պահանջել է երեխայից չբացահայտել առերևույթ հանցանք կատարած անձին, արդյոք կասկածի տակ են դրվել երեխայի՝ դեպքերի հետ կապված նախկին ցուցմունքները, երեխան ինչպիսի սուբյեկտիվ համոզմունք ունի այն մասին, թե ինչ հետևանքներ կարող են առաջացնել ցուցմունքներն իր և իր մերձավոր անձանց համար.

8. արդյոք երեխայի մոտ առկա են հետտրավմատիկ սթրեսային խանգարումների կամ այլ հոգեկան խանգարումների ախտանիշներ, արդյոք վերապրում է իրադարձությունները կրկնվելու վախը, առկա է արդյոք մեղքի զգացում, տազնապ, սարսափ և այլն.

9. առանձին քննչական, վարչական կամ դատական վարույթների քանակը, դրանց ժամանակահատվածը և այդ ընթացքում իրադարձությունները վերհիշելու հետ կապված՝ երեխայի հոգեկան կամ էմոցիոնալ լարվածությունը.

10. արդյոք ձայնագրված դեպոնացման օգտագործումը կնվազեցնի երեխայի կողմից ցուցմունք տալու հոգեկան կամ էմոցիոնալ լարվածությունը, և արդյոք դեպոնացումը կարող է օգտագործվել երեխայի կողմից ցուցմունք տալու հաճախականությունը նվազեցնելու համար:

Նույն կանոնների 8(b) կետի համաձայն՝ դեպոնացումը թույլատրելու դեպքում, դատարանը կարող է կատարել հետևյալ գործողությունները.

1. դեպոնացումը նշանակել այն օրը, երբ երեխայի հիշողությունը, ամենայն հավանա-

կանությամբ, թարմ է, և օրվա այն պահին, երբ երեխայի ուշադրությունը, ամենայն հավանականությամբ, լավագույն վիճակում է.

2. դեպոնացումը նշանակել այն սենյակում, որտեղ ապահովված է գաղտնիությունը, հարմարավետությունը, որը չի շեղի երեխային, և սենյակը չի լինի պաշտոնական.

3. նշանակել ընդմիջում, երբ դա պայմանավորված է երեխայի հարմարավետությամբ և ուշադրության ապահովման անհրաժեշտությամբ.

4. հաստատել այն հանգամանքը, որ երեխան գիտակցում է սուտ ցուցմունք տալու բացասական հետևանքները, ինչպես նաև երեխայի զարգացման մակարդակը և բանավոր հաղորդակցվելու ունակություններն այնպիսին են, որ նա կարող է տալ ճշմարիտ ցուցմունքներ.

5. մինչև հարցաքննություն սկսելը երեխային բացատրել ցուցմունքը դեպոնացնելու նպատակը և պարզել կողմերի ներկայությունը.

6. թույլատրել հարցաքննությանն աջակցելու նպատակով ներգրավել մասնագետի.

7. հսկել ներկա գտնվող անձանց վարքագիծը և շարժումները.

8. թույլ տալ երեխային ցուցմունք տալու՝ հատակին, աթոռին, վստահելի չափահաս անձի ծնկներին նստած վիճակում կամ սենյակում շարժվելիս.

9. թույլ տալ ամբաստանյալին գտնվել այնպիսի դիրքում, որ նա կարողանա խորհրդապահական կարգով հաղորդակցվել իր փաստաբանի հետ.

10. մինչև ցուցմունքների դեպոնացումը թույլատրել, որ ամբաստանյալը ծանոթանա և ուսումնասիրի պետության տրամադրության տակ գտնվող այն փաստաթղթերն ու այլ ապացույցները, որոնք կապված են դեպոնացմանը վերաբերող հարցերի հետ.

11. դադարեցնել այն անձի մասնակցությունը, որի ներկայությունն անհրաժեշտ չէ դեպոնացմանը, կամ որի վարքագիծը խոչընդոտում է դեպոնացմանը կամ լարվածություն է ստեղծում երեխայի համար:

Կանոնների (10)-րդ կետի համաձայն՝ եթե դատարանը կամ լուսններ անցկացնող պաշտոնատար անձը թույլատրում է տեսաերկրի վրա ձայնագրված դեպոնացված ցուցմունքն

օգտագործել որպես ապացույց, ապա երեխան չի հրավիրվում դատարան, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը կամ լսումներ անցկացնողը որոշում է, որ, ելնելով արդարության շահերից, երեխայի կողմից տրված լրացուցիչ ցուցմունքը պարտադիր է այն պատճառներով, որոնք դեպոնացման ժամանակ հայտնի չէին և պատշաճ ջանասիրությամբ չէին կարող հայտնի լինել:

Վերմուտ նահանգի «Սեքսուալ չարաշահումների պատասխանատվության համակարգը բարելավելու վերաբերյալ» ակտի (2009 թվականի մարտի 4) 15-րդ կանոնը<sup>11</sup> կարգավորում է սեռական հանցագործությունների գործերով անչափահասների ցուցմունքների դեպոնացումը: Նշված ակտի 15-րդ կանոնի (A) ենթակետի համաձայն՝ սեռական հանցագործության զոհ համարվող մինչև 16 տարեկան երեխայի ցուցմունքները կարող են դեպոնացվել կողմերի համաձայնությամբ կամ դատավորի որոշմամբ: Նույն կանոնի (C) (1) ենթակետի համաձայն՝ դատարանը կարգադրում է պաշտպանել դեպոնենտին էմոցիոնալ բնույթի վտանգներից, ոչ անհրաժեշտ ձանձրույթից և հիասթափությունից, կաշկանդվածությունից, ճնշվածությունից, նրա մասնավոր կյանք ներխուժելուց, ժամանակն անհարկի օգտագործելուց: Տվյալ կարգադրությունը, այլ միջոցների հետ միասին, ներառում է հետևյալը.

1) ցուցմունքները պետք է դեպոնացնել հստակ որոշված պայմանների առկայության դեպքում՝ ներառյալ ցուցմունքների դեպոնացման վայրը, ժամանակը և կարգը.

2) դեպոնացումը պետք է կատարվի միայն գրավոր հարցերի միջոցով.

3) դեպոնացման ընթացքում որոշ հարցեր կարող են հանվել, կամ դեպոնացումը կարող է սահմանափակվել որոշակի հարցերի շրջանակով.

4) դեպոնացմանը մասնակցող անձանց շրջանակը որոշում է դատավորը.

5) դեպոնացումն ավարտելուց հետո ծայնագրությունները պետք է փակվեն և անհասանելի լինեն՝ մինչև դատավորի կողմից կարգադրություն արձակելը:

Այսպիսով՝ ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել.

1) Նախագծով անհրաժեշտ է նախատեսել երեխայի ցուցմունքը՝ մինչդատական վարույթում դեպոնացնելու ինքնուրույն հիմք:

2) Գործնականում անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել քրեական վարույթում տուժող երեխաների մասնակցությամբ կատարվող նույնաբովանդակ քննչական գործողությունների դեպքերը, տուժող երեխաների և առերևույթ հանցագործություն կատարած անձանց միջև անմիջական շփումը:

3) Մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի ապահովման նպատակով պաշտպանության կողմը պետք է բավարար և իրատեսական հնարավորություն ունենա երեխայի ցուցմունքների դեպոնացման ընթացքում անմիջական կամ միջնորդավորված եղանակով իրականացնելու հակընդդեմ հարցման իրավունքը:



<sup>11</sup> St' u An Act Relating to Improving Vermont's Sexual Abuse. Approved: March 4, 2009. <http://www.leg.state.vt.us/docs/2010/Acts/Act001.pdf> (22.11.2014).

**ԳԵՎՈՐԳ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**

«Վաճառվող դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու»

**ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ**

Դատական քննության սահմանների և դրանց անփոփոխելիության ընդհանուր պայմանը դատական վարույթներում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքներից է: Դատական քննության սահմանների որոշիչը մեղադրանքն է՝ որպես օրենքով սահմանված կարգով ներկայացված հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին: Մեղադրանքը դատական քննության սահմանների որոշիչն է՝ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչներով: Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

Դատական քննության սահմանների կանոնին հակադարձ համեմատական է դատարանում մեղադրանքը փոփոխելու քրեադատավարական ինստիտուտը, որը, հանդիսանալով քրեական դատավարության հայեցակարգային պատկանելության որոշիչներից մեկը, մշտապես շոշափվել է վարույթի մրցակցայնացմանն ուղղված իրավական բարեփոխումների շրջանակներում: Ինչպես այս ինստիտուտն ինքնին, այնպես էլ դրա կիրառման առանձին գործնական հարցերն առավելապես քննարկվել և հստակեցվել են մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի անվան տակ լրացուցիչ նախաքննության քողարկված կիրառումը բացառելու նկատառումով: Արդյունքում՝ դատարանում մեղադրանքի փոփոխման ռեժիմների գործադրման հիմքերի հարաբերակցության հետ կապված մի շարք հարցեր սպառված չեն, իսկ դրանց հստակեցումը կարևոր նշանակություն ունի այդ ինստիտուտի պատշաճ կիրառումն ապահովելու համար:

Ինչպես տեսության մեջ, այնպես էլ բարձրագույն դատական ատյանների նախադեպա-

լին իրավունքում, ընդունված է մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքի փոփոխման երկու հարաբերականորեն ինքնուրույն ռեժիմների գոյությունը, մասնավորապես, մեղադրանքի փոփոխում՝ քննչական գործողությունների կատարմամբ (առաջին ռեժիմ) և մեղադրանքի փոփոխում՝ առանց քննչական գործողությունների կատարման (երկրորդ ռեժիմ):

«Քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ

• ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 87 2015

կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ (առաջին ռեժիմ):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, և ոչ թե այն, որը նրան մեղազարկվում է (երկրորդ ռեժիմ):

Մեղադրանքի փոփոխման առաջին ռեժիմի գործադրման հիմքն այնպիսի հանգամանքների ի հայտ գալն է, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում: Այդ հիմքը կազմող երկու՝ «հայտնի չեն» և «չէին կարող հայտնի լինել» բաղադրիչների ինքնուրույնությունը հարաբերական է և ենթադրում է դրանց միասնություն. մեղադրանքը փոփոխելու նպատակով քննությունը հետաձգելու համար անհրաժեշտ է, որ այն պայմանավորող հանգամանքը ոչ միայն նախկինում հայտնի չլինի, այլև դրա հայտնի չլինելն ունենա օբյեկտիվ, դրանք ի հայտ բերելու պարտականություն կրող սուբյեկտի կամքից, ջանասիրությունից, պարտականությունները պատշաճ կատարելուց անկախ պատճառներ: Քննարկվող հիմքը չի կարող առկա լինել, եթե գործի քննությունն իրականացնող սուբյեկտին հայտնի էր այդ հանգամանքի գոյության ողջամիտ հնարավորությունը, սակայն վերջինս անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել դրանց հաստատման կամ հերքման ուղղությամբ: Առաջին ռեժիմի գործադրման, այսինքն՝ մեղադրանքը փոփոխելու նպատակով դատական քննությունը հետաձգելու համար անհրաժեշտ է նաև, որ օբյեկտիվորեն անհայտ հանգամանքն ի հայտ գալուց հետո գործի փաստական հանգամանքները հնարավորություն չտան մեղադրանքը փոփոխելու առանց դատական քննության հետաձգման:

Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում» պայմանը վե-

րաբերելի չէ մեղադրանքի փոփոխման երկրորդ ռեժիմին: Այսինքն՝ առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքը դատարանում կարող է փոփոխվել նաև այն դեպքում, երբ այն պայմանավորող հանգամանքը հայտնի էր կամ կարող էր հայտնի լինել մինչդատական վարույթում<sup>1</sup>:

Մեղադրանքի փոփոխման ռեժիմների այն տարբերությունը, որ դրանցից առաջինի հիմքում բացառապես նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքներ են, իսկ երկրորդը կարող է կիրառվել նաև նախկինում հայտնի հանգամանքների հիման վրա, էական լինելու հետ մեկտեղ, նաև ձևական է և ընդամենը նպատակ է հետապնդում բացառելու դատական քննությունը հետաձգելու և նոր քննչական գործողություններ կատարելու հնարավորությունն այն դեպքում, երբ դրա պատճառ դարձած հանգամանքը հայտնի էր և դրա ստուգմանն ուղղված քննչական գործողությունները կարող էին կատարված լինել նաև մինչդատական վարույթում՝ այդպիսով չեզոքացնելով քրեական հետապնդման մարմնի թույլ տված թերությունները վերացնելու և մեղադրանքն ամրապնդելու լրացուցիչ հնարավորությունը: Այնքանով, որքանով մեղադրանքն առանց քննչական գործողությունների կատարման կարող է փոփոխվել նաև նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքների հիման վրա, այսինքն՝ նախկինում անհայտ հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ մեղադրանքի փոփոխման և առաջին և երկրորդ ռեժիմի գործադրման համար, դրա «օբյեկտիվորեն անհայտ» հատկանիշը չի ապահովում քննարկվող ռեժիմների գործադրման հիմքերի ամբողջական սահմանազատում:

Դրանց բովանդակային տարբերությունն արտահայտվում է «եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու՝ առանց դատական քննությունը հետաձգելու» պայմանում, որը, քննարկվող ռեժիմների հիմքերը դրանց համընկնող մասում տարբերակելու, այսինքն՝ մինչդատական վարույթում օբյեկտիվորեն անհայտ հանգամանք ի հայտ գալու դեպքում, մեղադրանքի փոփոխման ռեժիմը որոշելու չափանիշն է: «Առանց դատական քննու-

<sup>1</sup> Տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԴ2/0144/01/09 որոշման 20-րդ կետը:



թյունը հետաձգելու մեղադրանքը փոփոխելու հնարավորություն» պայմանը վերաբերելի է երկու ռեժիմներին էլ. այն բացասական պայման է առաջինի և դրական՝ երկրորդ ռեժիմի գործադրման համար:

Նշված պայմանի բովանդակությունն օրենսդրորեն սահմանված չէ, այսինքն՝ օրենսդիրը չի պարզաբանում, թե երբ են գործի փաստական հանգամանքները հնարավորություն տալիս մեղադրանքը փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու: Այդպիսի փորձ է արել ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրելով, որ «եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը, (...) պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգելու գործի դատական քննությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատական քննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը (...) պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոխելու մասին<sup>2</sup>»:

Նկատենք, որ այս մեկնաբանությունը, դատական քննությունը հետաձգելու անհրաժեշտությունը կապելով որևէ հանգամանքի կամ դրվագի շուրջ դատարանում քննություն կատարելու հնարավորության կամ անհնարինության հետ, փոփոխել է քննարկվող պայմանի բովանդակությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասը դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ մեղադրողի միջնորդությունը պայմանավորում է նոր հանգամանքն ի հայտ գալուց հետո մեղադրանքը փոփոխելու և ոչ թե դրա շուրջ դատարանում քննություն կատարելու անհնարինությամբ: Այդ նորմը չի սահմանում, որ դատական քննությունը հետաձգվում է նոր ի հայտ եկած հանգամանքի ուղղությամբ քննչական գործողություններ կատարելու և մեղադրանքը փոփոխելու համար, եթե այդ գործողությունները չեն կարող կատարվել դատարանում: Դրանում խոսվում է նոր հանգամանքն

ի հայտ գալուց հետո մեղադրանքը կամ փոփոխելու կամ դրա անհնարինության դեպքում՝ դատական քննությունը հետաձգելու և քննչական գործողություններ կատարելու մասին, և համապատասխանաբար, դրանում ընդհանրապես խոսք չկա նոր հանգամանք ի հայտ գալուց հետո դրա շուրջ դատարանում քննություն կատարելու հնարավորության մասին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, կախված քննվող հանցագործության բնույթից, նոր դրվագի շուրջ դատարանում քննություն կատարելը որոշ դեպքերում համարելով հնարավոր, իսկ որոշ դեպքերում անհնար, հակասում է դատական քննության սահմանների կանոնին: Այնքանով, որքանով գործի քննությունը դատարանում իրականացվում է անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում, նախկինում անհայտ և մեղադրանքի ծավալում առերևույթ ներառման ենթակա նոր ի հայտ եկած հանգամանքի շուրջ քննությունը, օրինակ, այն ստուգելու համար փորձաքննություն նշանակելը, վկաներ հարցաքննելը, ճանաչման ներկայացնելը և այլն, դուրս է դատական քննության՝ արդեն իսկ որոշված սահմաններից: Դատական քննության սահմանների կանոնը հնարավորություն չի տալիս դատարանում նպատակային քննություն կատարելու մեղադրանքի ծավալում թեկուզև առերևույթ ներառման ենթակա, բայց տվյալ պահին չներառված հանգամանքի կամ նոր դրվագի վերաբերյալ՝ անկախ քննվող հանցագործության բնույթից: Ուստի, նոր ի հայտ եկած հանգամանքի կամ դրվագի շուրջ դատական քննության շրջանակում քննություն կատարելու հանցագործության բնույթով պայմանավորված հնարավորության մասին առհասարակ խոսք լինել չի կարող. բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերով այն անհնարին է դատական քննության սահմաններից դուրս գտնվելու պատճառով: Ասվածն, իհարկե, չի նշանակում, որ դատական քննության սահմանները միշտ բացառում են նոր փաստական հանգամանքի հաստատումը հենց դատարանում: Առաջադրված մեղադրանքի հիմքում դրված և դատարանում հետազոտման ենթակա ապացույցների հետազոտման (թեկուզ ցուցմունքների բո-

<sup>2</sup> Տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔՐԴ2/0144/01/09 որոշման 21-րդ կետը:

վանդակության փոփոխման, կրկնակի փորձաքննության նշանակման և այլնի) արդյունքում նախկինում անհայտ կամ վարկածի մակարդակում հայտնի հանգամանքների հաստատումն ապահովող փաստական տվյալների ստացումը չի խախտում դատական քննության սահմանները: Դատական քննության սահմանները չեն բացառում մեղադրանքում ներառված փաստերի վերաբերյալ արդեն իսկ առկա ապացույցների հետազոտման արդյունքում այդ փաստերի հետ կապված այլ փաստերի վերհանումը կամ հաստատումն ու դրանց հիման վրա մեղադրանքի փոփոխությունը:

Բայց Վճռաբեկ դատարանի դիրքորոշման մեջ խոսքը ոչ թե դատական քննության սահմաններում տեղավորվող, այլ հենց դրանից դուրս քննություն կատարելու հնարավորության մասին է: Բանն այն է, որ, նախ՝ դրանում քննչական գործողությունները կատարելու հնարավորությունը պայմանավորվում է բացառապես քննվող հանցագործության բնույթով՝ անկախ դրանց դատական քննության սահմաններում տեղավորվելու կամ չտեղավորվելու հանգամանքից: Բացի այդ, ըստ օրենսդրի՝ մեղադրանքը փոփոխելու համար դատական քննությունը հետաձգելու կամ չհետաձգելու հարցը մեղադրողը քննարկում է այն ժամանակ, երբ մեղադրանքի սահմաններում թույլատրելի քննության, այսինքն՝ առաջադրված մեղադրանքին վերաբերելի և ապացուցողական զանգվածում ներառված ապացույցների հետազոտման արդյունքում նոր հանգամանքն ի հայտ է եկել և ինքը հանգել է հետևության, որ մեղադրանքը ենթակա է փոփոխման, այսինքն՝ երբ նոր հանգամանքին վերաբերելի՝ դատական քննության սահմաններում տեղավորվող քննությունն արդեն իսկ ավարտվել է: Իսկ դրանից հետո հնարավոր քննությունը, բնականաբար, դատական քննության սահմաններից դուրս է: Եվ վերջապես, դատական քննության սահմաններում տեղավորվող քննությունը դատարանում կամ դատական քննությունը հետաձգելուց հետո կատարելու հարց առհասարակ չի կարող քննարկվել: Դատական քննության սահմաններում տեղավորվող քննությունը միշտ կատարվում է դատարանում և դրա համար դատական քննությունը հետաձգելու մասին խոսք լինել չի կարող:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, դատական քննության սահմաններում նոր հանգամանքի շուրջ քննություն կատարելուց և դրա արդյունքում մեղադրանքը փոփոխելու հարց առաջանալուց հետո հնարավոր համարելով այդ պահին դարձյալ դիտարկել նոր հանգամանքի շուրջ դատարանում նպատակային քննություն կատարելու հնարավորությունը, ըստ էության հնարավոր է համարում դատարանում դատական քննության սահմաններից դուրս դատավարական գործողությունների կատարումը: Այնինչ, անկախ նրանից, թե ինչ բնույթի հանցագործության վերաբերյալ գործ է քննվում դատարանում, ի հայտ եկած հանգամանքը հաստատված համարելու և մեղադրանքի մեջ ներառելու համար քննություն կատարելու և հատկապես դրանց վերաբերելի նոր ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությունն ինքնին նշանակում է, որ գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը փոփոխել՝ առանց դատական քննությունը հետաձգելու: Այլ կերպ ասած՝ նոր ի հայտ եկած հանգամանքի շուրջ նպատակային քննություն կատարելու անհրաժեշտությունը հավասարազոր է տվյալ պահին մեղադրանքը փոփոխելու՝ գործի հանգամանքներով պայմանավորված անհնարինությանը՝ որպես մեղադրանքը փոփոխելու համար գործի քննությունը հետաձգելու անհրաժեշտությունը որոշող պայման:

Մեղադրանքի փոփոխման ռեժիմը որոշող վերոնշյալ հավասարաբեկ պայմանների բովանդակությունն ուղիղ համեմատական է օրենսդրորեն օգտագործվող «ի հայտ է եկել» և «անհերքելիորեն վկայում են» հասկացությունների հարաբերակցությանը:

Առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքի փոփոխումն օրենսդիրը պայմանավորում է դրա՝ դատարանում հետազոտված ապացույցներից բխող «անհերքելի» անհրաժեշտությամբ: Այս հասկացությունն առնվազն ենթադրում է, որ դատարանում հետազոտված ապացույցներն ապացուցման ընդհանուր կանոններին համապատասխան հաստատում կամ հերքում են մեղադրանքի փոփոխությունը պայմանավորող այս կամ այն հանգամանքը: Այլ կերպ ասած՝ մեղադրանքի փոփոխման հիմք հանդիսացող հանգամանքն այդ դեպքում ապացուցվում է դատական քննության

ընթացքում և, առանց որևէ քննչական գործողության անհրաժեշտության, բավարար հիմք դառնում մեղադրանքը փոփոխելու համար:

«Ճ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրն օգտագործում է «ի հայտ գալ» հասկացությունը, որն իր տառացի նշանակությամբ ենթադրում է փաստական հանգամանքի ապացուցվածության անհամեմատ ցածր աստիճան, և չի ենթադրում պատշաճ ապացուցված փաստական հանգամանք՝ անհրաժեշտ դարձնելով դրա ապացուցման, հաստատման ուղղությամբ կատարելու քննչական գործողություններ: Բայց «ի հայտ է եկել» և «եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու՝ առանց դատական քննությունը հետաձգելու» հասկացությունների՝ օրենսդրի կողմից օգտագործվող համադրությունը վկայում է, որ «ի հայտ գալ» հասկացությունը դրանում օգտագործվում է երկիմաստ՝ նաև անհերքելիորեն վկայելու նշանակությամբ՝ ենթադրելով հաստատված փաստական հանգամանքի առկայություն: Բանն այն է, որ նոր հանգամանք ի հայտ գալու դեպքում գործի փաստական հանգամանքները հնարավորություն կտան դրա հիման վրա փոփոխելու մեղադրանքը բացառապես այն դեպքում, երբ փաստական հանգամանքը դատարանում հաստատվել է, այսինքն՝ ի հայտ է եկել դրա հաստատումն ապահովող դատավարական ձևով: Հետևաբար, նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքի ի հայտ գալը, որը հնարավորություն է տալիս փոփոխելու մեղադրանքն առանց դատական քննության հետաձգման, հավասարազոր ու նույնական է այդ հանգամանքի հաստատմանը, և նրան, որ դատարանում հետազոտված ապացույցներն անհերքելիորեն վկայում են մեղադրանքը փոփոխելու անհրաժեշտության մասին:

Այսպիսով, առանց դատական քննությունը հետաձգելու դատարանում մեղադրանքը փոփոխելու՝ գործի փաստական հանգամանքներով պայմանավորված հնարավորությունը կախված է նրանից՝ մեղադրանքի փոփոխությունը պայմանավորող հանգամանքը ի հայտ է եկել, թե՛ հաստատվել է դատական քննության ընթացքում: Այդ հնարավորության՝ գործի փաստական հանգամանքներով պայմանա-

վորվածությունը կրում է դատավարական և ոչ թե նյութաիրավական բնույթ և կախված է ոչ թե քննվող հանցագործության բնույթից, այլ դատական քննության պատշաճ սահմաններում այդ հանգամանքների ապացուցման հնարավորությունից:

Այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում պարզվել է գործի համար նշանակություն ունեցող, նախկինում օբյեկտիվորեն անհայտ որևէ հանգամանքի գոյության ողջամիտ հնարավորությունը, այսինքն՝ տվյալ հանգամանքն «ի հայտ է եկել» բառի բուն իմաստով, դեռևս հաստատված չէ, ուստի անհերքելիորեն չի վկայում մեղադրանքը փոփոխելու անհրաժեշտության մասին, ուրեմն գործի փաստական հանգամանքները թույլ չեն տալիս մեղադրանքը փոխել՝ պայմանավորելով այդ նպատակով դատական քննությունը հետաձգելու և այդ հանգամանքի շուրջ քննության անհրաժեշտությունը: Միաժամանակ, այն դեպքում, երբ այդ հանգամանքն ի հայտ է եկել դրա հաստատումն ապահովող դատավարական ձևով, ապացուցման ընդհանուր կանոններին համապատասխան հաստատվել է անմիջապես դատարանում՝ դատական քննության սահմաններում կատարված քննությամբ, և դրա կապակցությամբ դատական քննության սահմաններից դուրս քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտություն չկա, ուրեմն գործի փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս մեղադրանքը փոփոխելու՝ առանց դատական քննության հետաձգման:

Մեղադրանքի փոփոխման ռեժիմների գործադրման հիմքերի հստակ սահմանազատման բացակայությունը, որը պայմանավորված է ինչպես դրա իրավական կարգավորման անհստակությամբ, այնպես էլ իրավական մեկնաբանությունների համակարգայնության և փոխհամաձայնեցվածության պակասով, մշտապես խնդիրների տեղիք է տալիս այդ ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում: Դրանց՝ վերը ներկայացված տարբերակումը, կարծում ենք, համապատասխանում է ինչպես քննարկվող ինստիտուտի հայեցակարգային տրամաբանությանը, այնպես էլ դատական քննության ընդհանուր պայմանների բովանդակությանը և կարող է ապահովել մեղադրանքի փոփոխման ռեժիմների հստակ և հիմնավոր գործադրումը:

**ՀՈՎՍԵՓ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

**ՍԱՄՎԵԼ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ**

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

## **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 32-րդ գլուխը, որն ամրագրում է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ, միտված է պաշտպանելու այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի, իրականացման ընթացքում: Սա նշանակում է, որ վերոնշյալ գլխում ամրագրված են այնպիսի հանցագործություններ, որոնք միասեռ են և ունեն միևնույն սեռային օբյեկտը<sup>1</sup>: Զինվորական ծառայության կարգի պահպանումը ելակետային նշանակություն և ազդեցություն ունի զինվորական ստորաբաժանումների համախմբվածության և մարտունակության վրա: Սակայն հարկ է նկատել, որ օրենսդրի կողմից նախանշված և ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում զետեղված որոշ դիսպոզիցիաներ ուղղված չեն ապահովելու քրեական քաղաքականությունն այս ոլորտում, ուստի շատ հաճախ խնդիրներ են ստեղծում իրավակիրառ պրակտիկայում:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը պատիժ է սահմանում երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելու կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասը, հղում կատարելով 1-ին

մասով նախատեսված արարքին, պատիժ է նախատեսում այն զինծառայողի համար, որը պատիժ է կրում կարգապահական գումարտակում: Այս դրույթը պարունակում է որոշ հիմնախնդիրներ, որոնք կապված են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտի հետ:

Նշված հանցագործության օբյեկտը զինվորական ծառայություն անցնելու կարգն է, որը սահմանվում է օրենքներով, զինվորական կանոնագրքերով և կանոնադրություններով: Հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

1. զորակոչի կամ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության այլ վայրն ինքնական թողնելը,
  2. առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը:
- Հանցագործությունը համարվում է տևող և ավարտված է համարվում հանցանք կատարած անձի ձերբակալման կամ մեղայականով նրա ներկայանալու պահից:

Սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղակի դիտավորությամբ, քանի որ անձը գիտակցում է, որ թողնում է զորամասը կամ ծառայության այլ վայրը կամ ժամանակին չի վերադառնում ծառայության և ցանկանում է այդ:

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մաս-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (6-րդ հրատարակություն)՝ փոփոխություններով և լրացումներով»./Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ.Խաչիկյան, Գ.Ղազինյան, Ն.Մաղաքյան, Ա.Մարգարյան, Տ.Սիմոնյան, Վ.Քոչարյան. - Երևանի պետ. համալսարան. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2012թ., էջ 944:

նակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ինչն ամրագրված է նաև «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում: Սակայն ՀՀ քրեական օրենսգիրքը զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է համարում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձանց և վարժական հավաքներ անցնող զինապարտներին: Նշվածից ակնհայտ է, որ քրեաիրավական իմաստով նշված հանցագործությունների սուբյեկտն անցնում է զինվորական ծառայություն կամ վարժական հավաք:

ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի վիճահարույց մասի դեպքում անհասկանալի է, թե կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալն ինչպես կարող է անցնել զինվորական ծառայություն և, հետևաբար, ինչպես է ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում ամրագրվել այնպիսի հանցագործություն, որի սուբյեկտն ուղղակիորեն չի անցնում զինվորական ծառայություն:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում ... կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը<sup>2</sup>: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի ուժով<sup>3</sup> իրավական ակտը դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանելու դեպքում ակնհայտ է դառնում, որ զինվորական ծառայության ժամկետում չհաշվարկելով դատապարտյալի՝ կարգապահական գումարտակում պատիժ կրելու ժամանակահատվածը, վերջինս, հանդիսանալով զինապարտ, փաստացի չի անցնում զինվորական ծառայություն, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխով նախատեսված հանցագործությունների սուբյեկտի պարտադիր, լրացուցիչ հատկանիշ է:

Իսնդիրը «զինվորական ծառայություն անցնելու» եզրույթի տարածական մեկնաբանության մեջ է: Այսինքն, այն բոլոր դեպքերում, երբ զինծառայողը պատիժ է կրում կարգապահական գումարտակում, վերջինս զինվորական ծառայություն չի անցնում, ինչն էլ, իր հերթին, դադարեցնում է նրա՝ որպես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը: Այնուամենայնիվ, առանց հաշվի առնելու վերոգրյալ հանգամանքը, առկա են դեպքեր, երբ քրեական հետապնդում է հարուցվում հենց նշված հոդվածով:

Չնայած վերոնշյալին՝ պետք է արձանագրել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 11-րդ գլխի՝ կարգապահական գումարտակում պահելը կատարելը, և մասնավորապես 48-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակի հրամանատարությունը պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հատուկ ծրագրով դատապարտյալի հետ անցկացնում է ֆիզիկական և մարտական պատրաստականության դասընթացներ, իսկ ուղղման հիմնական միջոցներից բացի, կարող են կիրառվել նաև զինվորական ծառայությամբ պայմանավորված ուղղման այլ միջոցներ: Այսինքն, կարգապահական գումարտակում պահվող դատապարտյալն առանձին դեպքերում կարող է կրել զինվորական ծառայության առանձին պարտականություններ, սակայն դա դեռևս չի նշանակում, որ նա անցնում է զինվորական ծառայություն: Դրանով իսկ կարելի է արձանագրել, որ կրելով զինվորական ծառայություն, անձը՝ ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով, զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չէ:

Այսպիսով, կարելի է տարանջատել զինվորական ծառայության 2 իրավական ռեժիմ՝ այն անցնելը և կրելը: «Անցնել» եզրույթը բացատրական իմաստով նշանակում է ինչ-որ բանի մեջ գտնվելը, իսկ «կրելը»՝ ինչ-որ բան ամփոփելը, ունենալն իր մեջ:<sup>4</sup> Նույնիսկ այստեղից պարզ է դառնում, որ այս եզրույթները նույնական չեն և տարբեր իրավահարաբերություն-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր №26 (201), էջ 6-7:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր № 15 (190), էջ 58:

<sup>4</sup> Տե՛ս է. Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Ա-Ձ: «Հայաստան» հրատարակչություն.: Երևան – 1976թ., էջեր 83, 773:



ներում դրանցից յուրաքանչյուրն առանձին է կիրառելի:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հատուկ սուբյեկտ հանդիսանալու համար անձը մեղսունակ և քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելուց բացի (ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդված), պետք է հանդիսանա՝

ա) զորակոչի հիման վրա կամ պայմանագրային հիմունքներով ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում զինվորական ծառայություն անցնող անձ,

բ) ռազմական հավաք անցնելու ժամանակ՝ զինապարտ:

Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մասին, ապա այդ օրենսդրական դրույթում առկա՝ «օրենքով սահմանված կարգով» ձևակերպման իմաստով զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ հանդիսանալու համար անձը պետք է օրենսդրական հատուկ ընթացակարգ անցնի<sup>5</sup>:

Վերլուծելով զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ օրենսդրությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ զինվորական ծառայության սկիզբ է համարվում ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը, իսկ ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը:

Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե ինչ կարգավիճակ է ունենում զինծառայողն այն դեպքում, երբ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն պետք է պատիժ կրի կարգապահական գումարտակում: Ճիշտ է, քրեակատարողական օրենսգիրքը ամրագրում է, որ պատիժը կրելու ընթացքում անձը

գտնվում է շարքային կազմի զինծառայողի կարգավիճակում, սակայն վերջինիս համար նախատեսված է դատապարտյալի առանձին իրավական ռեժիմ:

Ուսումնասիրելով արտասահմանյան մի շարք երկրների փորձը՝ ակնառու է, որ վերջիններս որոշ դեպքերում պարունակում են ՀՀ օրենսդրությամբ ամրագրված միևնույն կարգավորումները:

Այսպես, ՌԴ քրեական օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ մասն իդենտիկ է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասին: Ինչ վերաբերում է սուբյեկտին, ապա հարկ է նկատել, որ ՌԴ քրեական իրավունքում այս առումով կարծիքները տարբերվում են: Այսպես, ըստ դոկտոր, պրոֆեսոր Լեբեդևի, քանի որ անձին կարգապահական գումարտակ ուղարկելը կապված է զինվորական ծառայություն անցնելու հետ, հետևաբար վերջինս պահպանում է զինծառայողի իր կարգավիճակը՝ որոշակի սահմանափակումներով, որոնք նախատեսված են քրեական և քրեակատարողական օրենսդրությամբ: Ավելին, վերջինս որպես նշված հանցագործության օբյեկտ նշում է զինվորական ծառայության անցնելու կարգը<sup>6</sup>:

Սակայն արտասահմանյան փորձի գերակշիռ մասը մեկ քայլ առաջ է և նման դեպքերը կարգավորվում են ստորև ներկայացվող ուղիներով:

Այսպես, դոկտոր Շիշկոն նշում է, որ զինվորական ծառայություն անցնելու օբյեկտը ոչ միայն այն անցնելու կարգն է, այլ նաև զինվորական ծառայություն կրելու կարգը<sup>7</sup>:

Մեր կարծիքով նշված մոտեցումը հիմնավոր է, քանի որ կարգապահական գումարտակում անձը՝ օրենսդրության իմաստով, ուղղակիորեն չի անցնում զինվորական ծառայություն, այլ կրում է դրա առանձին տարրեր:

Հետխորհրդային պետություններից առանձնահատուկ ուշադրության է արժանի Ուկրաինայի քրեական օրենսգիրքը, որը 19-րդ գլխում ամրագրում է զինվորական հանցագործությունները, այն է՝ զինվորական ծառայություն կրելու

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴ/0389/01/11 որոշումը:

<sup>6</sup> Տե՛ս “Комментарий к Уголовному кодексу Российской Федерации” / отв. ред. В. М. Лебедев, – 10-е издание., перераб. и доп. – М.: Издательство Юрайт, 2010. – с. 841-843, 859-862.

<sup>7</sup> Տե՛ս “Уголовное право. Особенная часть: учебник” / под ред. И. В. Шишко – Москва: Проспект, 2014. – с. 704-705, 711-713.

կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այնուամենայնիվ, 401-րդ հոդվածում նշված է, որ զինվորական հանցագործություններ են համարվում զինվորական ծառայություն կրելու և զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները<sup>8</sup>: Դրանով իսկ ուկրաինական օրենսդիրը հստակ ամրագրել է սահմաններ՝ նշված հանցագործությունների համար և, կարծում ենք, այս պարագայում, իրավահարաբերություններն ամբողջապես կարգավորված են:

Հարկ է ընդգծել նաև Գերմանիայի զինվորական քրեական օրենսգրքը, որի 15-րդ պարագրաֆի համաձայն՝ զորամասն ինքնական թողնելը կարող է կատարվել զինվորական ծառայություն կրելուց ժամանակավորապես խուսափելու նպատակով:<sup>9</sup> Ճիշտ է, կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը Գերմանիայի քրեական օրենսգրքը չի նախատեսում, այնուամենայնիվ, նշված հանցագործությունների օբյեկտը զինվորական ծառայություն կրելն է, որը իրավական տեսանկյունից հիմնավոր է:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 2-րդ բաժինը՝ պատժի անհատականացման միջոցներ, նախատեսում է 132-43 հոդվածը, որի 2-րդ մասի համաձայն՝ անձի (...) պարտականությունների կատարումը ավարտվում է, կամ փորձաշրջանը կասեցվում է այն ժամանակ, երբ (...) դատապարտյալը զինվորական ծառայություն կրելու պարտականություններ է կատարում: Այստեղից կարելի է եզրահանգել, որ Ֆրանսիայի քրեական օրենսդրությունը նույնպես զարգացել է «զինվորական ծառայություն կրել»-ը որպես զինվորական հանցագործությունների օբյեկտ համարելու ուղիով:<sup>10</sup>

Զինվորական հանցագործությունների սուբյեկտի վերաբերյալ նման ձևակերպում պարունակել է նաև 1961 թվականի մարտի 7-ի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 245-րդ հոդվածը, որի համաձայն՝ զինվորական հանցագործություններ են համարվում զինվորական ծառայություն

կրելու համար սահմանված կարգի դեմ ուղղված՝ սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունները, որ կատարում են զինվորական ծառայողները, ինչպես նաև զինապարտները՝ վերջիններիս կողմից վարժահավաքներ կամ ստուգողական հավաքներ անցնելու ժամանակ:

Քրեական իրավունքի նման զարգացումներից ելնելով՝ կարծում ենք, որ զինվորական հանցագործությունները ոտնձգում են ոչ միայն զինվորական ծառայություն անցնելու կարգի, այլ նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ: Նման մոտեցումը թույլ կտա ընդգրկելու այս հանցագործությունների ամբողջ ոլորտը՝ առանց բացառությունների:

Սակայն, ներկայիս կարգավորումների պարագայում և հաշվի առնելով օբյեկտի առանձնահատկությունները, կարծում ենք, որ կարգապահական գումարտակում պատիժ կրող զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելն ուղղված է ոչ թե զինվորական ծառայություն անցնելու կարգի, այլ՝ արդարադատության դեմ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստի դեպքում: Նման իրավակարգավորումը բխում է քրեակատարողական օրենսդրության էությունից, քանի որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ բաժնով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժներն ուղղակիորեն ամրագրված են վերոնշյալ հոդվածում: Նշված հանցագործության վտանգավորությունն այն է, որ քննարկվող երևույթը խոչընդոտում է քրեական գործի քննությանը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կատարմանը: Հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է նրանով, որ անձն ինքնական և ապօրինաբար թողնում է ազատազրկման վայրը կամ կալանավորվածներին կամ

<sup>8</sup> Հասանելի է <http://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/razdel-1-19/>, հղումը կատարվել է 1 մարտի 2015թ.

<sup>9</sup> Տե՛ս Н. А. Шуплов, “Уголовно-правовая борьба с уклонениями от военной службы в ФРГ, Военно-уголовное право”, 2004 г., № 1. - с. 12-15.

<sup>10</sup> Հասանելի է <http://www.law.edu.ru/norm/norm.asp?normID=1243018&subID=100104265,100104266,100104297-1,100105714,100105716,100105742,100105752,100105793,100105803#text>, հղումը կատարվել է 1 մարտի 2015թ.

ձերբակալվածներին պահելու վայրը: Բացառություն է կազմում միայն կարգապահական գումարտակում պահելը՝ որպես ազատությունից զրկելու հետ կապված պատժի տեսակ: Այս դեպքում անհասկանալի է օրենսդրի տրամաբանությունը. մի կողմից, ինչպես արդեն հիմնավորվեց, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասի հանցակազմի սուբյեկտը չի անցնում զինվորական ծառայություն և, հետևաբար, չի կարող լինել այդ հանցագործությունների սուբյեկտ, իսկ մյուս կողմից, կարգապահական գումարտակում պատիժ կրող զինծառայողի կողմից ինքնական թող-

նելը, որը կարող է հավասարեցվել փախուստի, ամրագրված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածում:

Այսպիսով, իրավակիրառ պրակտիկայում ստեղծվել է իրավիճակ, երբ նորմը չի կարգավորում իրավահարաբերությունը և տեղի է ունեցել հանցակազմի օբյեկտի շփոթմունք: Նման պայմաններում նշված հիմնախնդրի հնարավոր լուծումը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասի բացառումն ու նույն օրենսգրքի 355-րդ հոդվածը նոր՝ 4-րդ մասով լրացնելն է:



**ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտրվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը<sup>1</sup>:

Այսինքն՝ տվյալ կառույցը ինքնական համարելու համար սահմանվել է չորս պայման, որոնք են. երբ օբյեկտը կառուցվել կամ վերակառուցվել է՝

ա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում,

բ) առանց թույլտվության,

գ) թույլտվությամբ սահմանված պայմանների էական խախտումներով,

դ) քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը ընդունման օրվանից ցայսօր ենթարկվել է մի շարք փոփոխությունների, մասնավորապես, 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-511-Ն, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՀՕ-188-Ն, 2005 թվա-

կանի դեկտեմբերի 15-ի թիվ ՀՕ-238-Ն օրենքներով, որոնցից վերջինը սահմանել է նորմեր, որոնք գերմանական մոդելով են կառուցված:

Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը սահմանում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը՝ անկախ նրանից, թե ով է այն կառուցել (2-րդ կետ, 1-ին պարբերություն):

Ինքնական կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը: Ինքնական կառույցի նկատմամբ հողամասի սեփականատիրոջ սեփականության իրավունքի ճանաչումը հիմք չէ ինքնական կառույցն օրինական ճանաչելու, ինչպես նաև արգելք չէ սույն հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նշված հայցը բավարարելու համար:

Այս նորմն, ըստ էության, այն հիմնական փոփոխությունը և նորույթն էր, որի հիման վրա այժմ կառուցված է ինքնական կառույցներին վերաբերող ողջ օրենսդրությունը: Համեմատության համար այն համադրենք նույն հոդվածի նախնական խմբագրությամբ տեքստի հետ, ո-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>1</sup> Հարկ է նշել, որ 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների և ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվում էին ինքնական կառուցված շենքերի, շինությունների և ինքնական զբաղեցված, առանց օրենսդրության պահանջների պահպանման օտարված (տրամադրված) պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի նկատմամբ իրավունքների ճանաչման հիմքերը և կարգը, իսկ օրենքի գործողությունը տարածվում էր մինչև օրենքի ուժի մեջ մտնելն ինքնական կառուցված և անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնի կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը հաշվառված շենքերի, շինությունների, այդ թվում՝ 50 և ավելի տոկոս ավարտվածության աստիճան ունեցող կիսակառույցների, ինչպես նաև ինքնական զբաղեցված, առանց օրենսդրության պահանջների պահպանման օտարված (տրամադրված) պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի վրա: Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով օրենքի գործողության ժամկետը սահմանվեց երկու տարի՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից (2003 թվականի փետրվարի 22-ից), և փաստորեն, օրենքի գործողության ժամկետն ավարտվեց 2005 թվականի փետրվարի 22-ին:

րը գործում էր մինչև 2005 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-238-Ն օրենքի ընդունումը<sup>2</sup>: Այն, ըստ էության, համապատասխանում է նաև Ռուսաստանի Դաշնության և, ընդհանրապես, Անկախ պետությունների համագործակցության մոդելային քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոններին: Մասնավորապես նշվում էր, որ դատարանը կարող է ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչել այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում իրականացվել է շինարարությունը:

Ինքնակամ կառույցի նկատմամբ նշված անձի սեփականության իրավունքը չի կարող ճանաչվել, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Այսինքն, տվյալ դեպքում, ըստ էության, ինքնակամ կառույցի նկատմամբ հողամասի սեփականատիրոջ սեփականությունը ճանաչելը դատարանի իրավունքն էր և ոչ թե պարտականությունը՝ հաշվի առնելով նաև դրա օրինականությանն առնչվող մի շարք պահանջներ (օրինակ՝ քաղաքացիների կյանքն ու առողջությունը):

Գործող օրենսդրությունը, ըստ էության, տարանջատում է «ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչում» և «ինքնակամ կառույցն օրինական ճանաչում» հասկացությունները: Ըստ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանության՝ սեփականության իրավունքի ճանաչումը տեղի է ունենում ինքնաբերաբար՝ օրենքի ուժով, առանց որևէ այլ պետական մարմնի կողմից դրա հատուկ ճանաչման: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը 2006 թվականին «Մարինե Հովհաննիսյանն ընդդեմ «Ձավմիկ» ՍՊԸ-ի թիվ 3-1889 (Ա) քաղաքացիական գործով, առ այն, թե դատարանը արդյոք կարող է հաստատել վարձակալության իրավունքով տրամադրված պետական սեփականություն հան-

դիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունների և հարթակի նկատմամբ անձի սեփականության իրավունքը ճանաչելու մասին հաշտության համաձայնությունը, սահմանել է, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել: Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, քանի որ այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին<sup>3</sup>»: Այսինքն, եթե նույնիսկ հողամասի սեփականատերը չի առարկում, որ տվյալ կառույցը համարվի ինքնակամ կառուցումն իրականացրած անձի սեփականությունը, ապա, միևնույն է, այն չի կարող այդպիսին համարվել օրենքի ուժով: Հիշյալ որոշումը հատկանշական է այն առումով, որ տվյալ դեպքում խոսքը պետական սեփականություն հանդիսացող հողամասի մասին էր. ինքնին պետությունն էր պատրաստ ճանաչելու ինքնակամ կառուցումն իրականացրած անձի սեփականությունը, սակայն օրենքում սահմանված դրույթը բացառում է նման հնարավորությունը:

Ինքնակամ կառույցի օրինական ճանաչումն արդեն ակտիվ գործողություն է, որի սուբյեկտները կոնկրետ պետական մարմիններն են: Մասնավորապես, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական համայնքների ղեկավարների (Երևանում՝ Երևանի քաղաքապետի<sup>4</sup>), համայնքի վարչական տա-

<sup>2</sup> 2005 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՀՕ-188-Ն օրենքում բացակայում էր միայն վերոնշյալ նորմը. մյուս կարգավորումներն առկա էին:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀՊՏ 1998/20 /53/ 09.09.08թ.:

<sup>4</sup> Կարծում ենք, որ այս բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ, ՀՀ Սահմանադրության համաձայն, Երևանը համայնք է, իսկ «Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո, ըստ էության, սահմանադրական այս նորմը ստացավ իր մանրամասնումը և կիրառությունը, ըստ որի՝ Երևանի քաղաքապետը համայնքի ղեկավար է, իսկ Երևանը բաժանվում է վարչական շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ունի ղեկավար:



րաձքներից դուրս՝ մարզպետների կողմից կառավարության սահմանած կարգով:

Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է այն պայմանները, որոնց առկայության դեպքում տվյալ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, մասնավորապես՝

ա) եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը,

բ) եթե վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին կամ առողջությանը,

գ) եթե կառուցված են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Զօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ընդ որում, ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցված վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը: ՀՀ կառավարությունն իր 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատել է ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը, որի համաձայն՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող հողամասերում կառուցված ինքնակամ օբյեկտն այլ կարգով է օրինականացվում, իսկ պետությանը կամ համայնքին պատկանող հողամասերում կառուցված ինքնակամ կառույցը՝ այլ: Այն է, հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույ-

քի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին, իսկ համայնքի սահմաններից դուրս՝ համապատասխան մարզպետին՝ միաժամանակ ներկայացնելով լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով տրված սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, որում առկա է ինքնակամ կառույցի վերաբերյալ համապատասխան նշումը: Իսկ համապատասխան համայնքի ղեկավարը կամ մարզպետը սույն կարգով սահմանված ժամկետում կայացնում է որոշում՝ ինքնակամ կառույցն օրինականացնելու կամ օրինականացումը մերժելու վերաբերյալ:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում (եթե դրանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս չեն) գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության ճանաչումից հետո, սահմանված ժամկետում, համայնքի ղեկավարը (Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետը), իսկ համայնքի վարչական տարածքից դուրս՝ համապատասխան մարզպետը, ընդունում է ինքնակամ կառույցների օրինականացման կամ չօրինականացված ինքնակամ կառույցները քանդելու մասին որոշում: Ընդ որում, հիշատակված որոշման մեջ պարտադիր առկա են լինում օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անելու մասին տվյալները:

Այսինքն, օրենսդիրը, ըստ էության, սեփականատիրոջ հայեցողությանն է թողել կառույցն օրինական ճանաչելու հարցը, քանի որ նրան միաժամանակ իրավունք է վերապահվում քանդելու իր հողամասում գտնվող կառույցը: Եվ քանի որ, ըստ էության, միայն օրինական ճանաչելու փաստն է թույլ տալիս տվյալ շենքը, շինությունը կամ այլ կառույցը գրանցելու որպես անշարժ գույք և մտցնելու քաղաքացիական շրջանառության մեջ, ուստի՝ հողամասի սեփականատիրոջ բացառիկ իրավագործությունն է որոշելու, թե օրենքի ուժով ի սկզբանե իրենը համարվող գույքն օրինական ճանաչելու հա-

մար արդյոք անհրաժեշտ է կատարել անհրաժեշտ գործողություններ, թե՛ ոչ, այսինքն՝ դիմել համապատասխան պետական մարմիններին, թե՛ ոչ: Քաղաքացիական օրենսգրքում հարցի նման կարգավորման դեպքում, ըստ էության, ստացվում է, որ տվյալ ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը հիմք չէ այն օրինական ճանաչելու համար, այսինքն, ըստ էության, քաղաքացիական օրենսգրքի այն նորմերը, որոնց համաձայն ճանաչվում են ինքնական կառույցի նկատմամբ հողամասի սեփականատիրոջ սեփականության իրավունքը, միայն բացառում են որևէ այլ անձի, բացառությամբ վերջինի, կողմից տվյալ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացումը (նույնիսկ սեփականատիրոջ համաձայնությամբ), սակայն միևնույն ժամանակ փաստում են, որ այդ կառույցը քաղաքացիական իրավահարաբերությունների լիարժեք օբյեկտ դառնալու համար անհրաժեշտ է այն ճանաչել օրինական՝ պահպանելով օրենքի պահանջները: Գտնում ենք, որ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված նորմը, ըստ էության, «միասնական ճակատագիր սկզբունքի» ևս մեկ՝ հերթական դրսևորումն է քաղաքացիական օրենսդրության մեջ, որի համաձայն՝ հողամասի վրա գտնվող ցանկացած գույք համարվում է դրա բաղկացուցիչ մասը<sup>5</sup>:

Մինչ այս պահը մենք քննարկում էինք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նախորդ և ներկա իրավակարգավորումները, այն լուծումները, որոնք այս կամ այն ժամանակահատվածում օրենսդիրը նպատակահարմար է գտել ինքնական կառույցների խնդիրը կարգավորելիս: Եվ այս համատեքստում, մեր կարծիքով, առավել ամբողջական և համապարփակ է թվում նախորդ իրավակարգավորումը: Մասնավորապես, այս առումով պետք է նկատի ունենալ մի քանի սկզբունքային հարցեր, մասնավորապես, նախ՝ գրեթե անհնարին է այնպիսի իրավիճակ, երբ սեփականատերը, որին պատկանող

հողամասում, իրականացվել է ինքնական կառուցումը, տեղյակ չլինի և հնարավորություն չունենա պաշտպանելու իր իրավունքները: Սեփականատերը՝ որպես բացարձակ իրավունքի կրող, իրավունք ունի և պարտավոր է պահպանել ու պաշտպանել իր սեփականությունը յուրաքանչյուրի և բոլորի ցանկացած տեսակի ոտնձգություններից: Այսինքն, ըստ էության, այն դեպքում, երբ որևէ անձ իրականացնում է ինքնական կառուցում, նա դա կարող է կատարել միայն հողամասի սեփականատիրոջ թողտվությամբ, նրա ցուցաբերած անփութության կամ, ինչու չէ՞ նաև անտարբերության հետևանքով: Ընդ որում, խոսքը հավասարապես վերաբերում է ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ պետության և համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերին: Միայն բացառիկ դեպքերում սեփականատերը կարող է օբյեկտիվորեն հնարավորություն չունենալ իրականացնելու իր սեփականությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը<sup>6</sup>: Կարծում ենք, այս հանգամանքը պետք է ելակետ ընդունել ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման հարցը լուծելիս:

Երկրորդ, ակնհայտ է, որ ինքնական կառույցն իրականացրած անձի և հողամասի սեփականատիրոջ միջև առաջանում է վեճ, իսկ այդ վեճը Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կարող է և պետք է լուծի միայն դատարանը:

Երրորդ, այս հարցի կապակցությամբ պետք է անդրադառնալ ՀՀ գործող օրենսդրությամբ ամրագրված այն նորմին, որ ինքնական կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը: Օրինականացված ինքնական կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը խախտվել են,

<sup>5</sup> Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ այն դեպքում, եթե սեփականության իրավունքի ճանաչման գործընթացը դրված լիներ դատարանի վրա, ապա կառույցն օրինական ճանաչելու անհրաժեշտություն չէր լինի, քանի որ այն բոլոր նորմերը, որոնք անհրաժեշտ են կառույցն օրինական ճանաչելու համար, դատարանը պետք է հաշվի առներ տվյալ գործով որոշում կայացնելիս:

<sup>6</sup> Բնական է, որ այս դեպքը չի կարող վերաբերել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերին:

ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Փաստորեն, ստացվում է հողամասի սեփականատիրոջ հայեցողությանն է վերապահվել տվյալ կառույցն օրինական ճանաչելու կամ չճանաչելու համար դիմելու կամ տվյալ կառույցը թողնելու կամ քանդելու հարցերը: Այս մոտեցումն օրենքում ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ ամրագրված նորմի տրամաբանական շարունակությունն է:

Չորրորդ, գործող օրենսդրության մեջ ներկայումս ամրագրված մոտեցումը, ըստ էության, ոչ թե սեփականության իրավունքի ձեռքբերման քաղաքացիաիրավական եղանակ է, այլ վարչական կարգով սեփականության իրավունքի ձեռքբերում: Այսինքն, օրենքը կարծես սանկցիա է նախատեսում սեփականատիրոջ իրավունքի խախտման համար և դա այն դեպքում, երբ օրենքն այնպիսի պայմաններ է նախատեսել հողամասի սեփականատիրոջ համար, որ նրան, ըստ էության, ձեռնտու է դրսևորել անփութություն կամ անտարբերություն և թույլ տալ իր հողում իրականացնել ինքնական կառուցում:

Հինգերորդ, այս պարագայում վերանում է նաև օրենսդրությամբ «սեփականության իրավունքի ճանաչումը» և «օրինական ճանաչումը» հասկացությունների տարանջատման անհրաժեշտությունը: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ վերոնշյալ հանգամանքները կարող են և պետք է նշանակություն ունենան միայն այն դեպքում, երբ ինքնական կառույցները՝ որպես ինստիտուտ, գոյություն ունեն, և տվյալ պետությունը որպես իրավական պետություն հնարավորություն է նախատեսում իր օրենսդրության մեջ, իր իրավական համակարգի շրջանակներում ունենալու և կիրառելու այս ինստիտուտը: Խնդիրն այն է, որ ինքնական կառույցն ինքնին սեփականության իրավունքի ձեռքբերման «ոչ իրավական եղանակ է, քանի որ պետությունն ի սկզբանե ընդունում է իր կողմից հռչակված կենտրոնական սկզբունքներից մեկի՝ սեփականության իրավունքի խախտման հնարավորությունը և խնդիրը լուծում է կամ դատական, կամ վարչական կարգով: Առաջին դեպքում դատարանին հնարավորություն տալով քննարկելու ապօրինության օրինականացման հար-

ցը, իսկ երկրորդ դեպքում, փոխանակ ակտիվ գործողություններով կանխելու կամ վերացնելու ոտնձգությունը, հռչակում է հողամասի սեփականատիրոջ իրավունքն ապօրինության նկատմամբ և հետևողականորեն սահմանում է ռեժիմներ, քննարկում հնարավորություններ կամ օրինական ճանաչելու, կամ քանդելու: Իրականում այս հարցի քննարկման ժամանակ պետք է հաշվի առնել մի քանի իրողություն: Մասնավորապես, նախ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդունման ժամանակ այս ինստիտուտի սահմանման անհրաժեշտությունը թելադրված էր գոյություն ունեցող փաստերով և իրողություններով, ուստի՝ օբյեկտիվ անհրաժեշտություն էր սահմանելու ռեժիմ, որին համապատասխան կլուծվի այդպիսի կարգավիճակ ունեցող շենքերի և շինությունների հարցը:

Երկրորդ, 2005 թվականին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, որոնց հիմնական նպատակը ՀՀ օրենսդրության մեջ «միասնական ճակատագիր» սկզբունքի իրացումն էր: Այն հետևողականորեն միացվեց նաև ինքնական կառույցներին վերաբերող դրույթներում՝ փորձելով լուծում տալու այն իրավիճակին, երբ հակաօրինական քայլ կատարողը (ինքնական կառուցում իրականացնողը) այս կամ այն կերպ հայտնվում էր օրինական դաշտում: Արդյունքում միացվեց գործող կարգավորումը, որը հանգեցրեց մեկ այլ ծայրահեղության, որի մասին արդեն մանրամասն խոսվել է վերևում:

Երրորդ, իրավական պետության կառուցման և զարգացման որևէ փուլում պետությունը պետք է որոշում կայացնի հրաժարվելու այս ինստիտուտից, քանի որ, կարծում ենք, այն արդեն իսկ կատարել է իր պատմական առաքելությունը և այժմ զարգացման նոր տենդենցներին զուգահեռ կարող է միայն խոչընդոտել օրինականության սկզբունքի լիարժեք իրագործմանը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարծում ենք, որ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը՝ նախատեսելով որոշակի անցումային ժամկետ՝ գոյություն ունեցող ինքնական կառույցների իրավական կարգավիճակի հարցին վերջնական լուծում տալու նպատակով:

**ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ**

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի  
և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՎԵՐԱՋԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՋՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

Ժողովրդավարական և իրավական յուրաքանչյուր պետության առանցքային առաքելությունն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորումը և պաշտպանության մեխանիզմների նախատեսումը, իշխանության ու այն իրականացնողների գործողությունների շրջանակի հստակ սահմանումը, պետական կարգի հիմունքների սահմանումը և իշխանական գործառույթների իրականացման կանոնակարգումը: Նշվածի ապահովման երաշխիքը Սահմանադրությունն է: Պատահական չէ, որ «սահմանադրություն» հասկացությունը բնորոշելիս հիմնականում այն նույնացվում է «հիմնական օրենք» բառակապակցության հետ<sup>1</sup>, ինչը պայմանավորված է, առաջին հերթին, նրանով, որ սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և առանցքային, գերակայող նշանակություն ունեցող օրենք է, ինչը և կարելի է համարել հիմնական օրենքի բնութագրիչը: Միաժամանակ հարկավոր է նշել, որ միջազգային փորձի, ինչպես նաև սահմանադրական իրավունքի զարգացման ուսումնասիրությունը վկայում է, որ Սահմանադրության առկայությունն ինքնին բավարար չէ իր իսկ առաքելությունն իրականացնելու համար: Չենք կարող չհամաձայնել պրոֆեսոր Գ. Հարությունյանի այն դիրքորոշման հետ, որի համաձայն՝ «Սահմանադրականությունը բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական հասկացություն է: Այն առաջին հերթին ենթադրում է սահմանադրական ժողովրդավարության հաստատում: Դա այն նպատակն

է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղի ընտրած երկրները: Սակայն այդ նպատակի իրականացումը պահանջում է, մասնավորապես, այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են՝ սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը և երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանությունը և այլն<sup>2</sup>»:

Սահմանադրականությունը պահանջում է պետությունում սահմանադրական դրույթների գերակայության, գործողության և պաշտպանվածության ապահովում, իշխանությանը կաշկանդում է իրավունքի գերակայության սկզբունքով՝ միաժամանակ նախատեսելով իշխանության ինստիտուցիոնալ կառույցների նկատմամբ վերահսկողության կառուցակարգեր ու սահմանելով հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը: Պատահական չէ, որ սահմանադրական կարգի կարևորագույն հիմունքներից մեկը Սահմանադրության և սահմանադրական սկզբունքների ու նորմերի պահպանումն է: Նշված սկզբունքների, նորմերի, ինչպես նաև արժեքների պահպանմանն ու ամրապնդմանն ուղղակիորեն առնչվում է սահմանադրական վերահսկողությունը: Ինչպես

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>1</sup> Տե՛ս Хабриева Т. Я., Чиркин В. Е., “Теория современной конституции” - М.: Норма, 2007, с. 10-11.  
<sup>2</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, «Սահմանադրությունից՝ սահմանադրականություն» - Եր., «Նժար», 2004թ., էջ 5:

նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը. «Առավել ընդհանուր բնորոշմամբ, սահմանադրական վերահսկողությունը հասարակության կենսագրի համընդհանուր ճանաչում գտած ու հաստատագրված կանոնների պահպանության երաշխիքն է, որն իրականացվում է սահմանադրական բոլոր ինստիտուտների ու մարմինների կողմից»<sup>3</sup>: Ընդունված փաստ է, որ այն հասարակություններում, որտեղ բացակայում է սահմանադրական վերահսկողությունը կամ այն անարդյունավետ է, սահմանադրականություն չի կարող հաստատվել<sup>4</sup>: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ սահմանադրական վերահսկողության համար առանցքային նշանակություն ունեն Սահմանադրության գերակայության ապահովումը, հասարակության կենսագրի հաստատագրված կանոնների պահպանումը, իշխանությունների հստակ բաժանումը և հավասարակշռումը, դրանց գործառույթների և իրավասությունների ներդաշնակումը, զսպող և հակակշռող լիազորությունների մեխանիզմի ձևավորումն ու երաշխավորումը: 2014 թվականի մարտ ամսին հրապարակված ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ևս անդրադարձ է արվում սահմանադրական վերահսկողությանը: Այսպես, ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթում նշվել է, որ սահմանադրական վերահսկողություն իրականացնող սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովումն է<sup>5</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական գրականությունում «սահմանադրական վերահսկողություն» հասկացությունն ունի տարբեր սահմանումներ: Ըստ իրավագետ Վ. Ի.

Լաֆիտսկու՝ սահմանադրական վերահսկողությունը պետությունում իրավապահպան գործունեության հատուկ տեսակ է, որը կայանում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի՝ սահմանադրությանը համապատասխանեցնելու մեջ<sup>6</sup>: Բ. Ա. Ստրաշունը սահմանադրական վերահսկողությունը բնութագրում է որպես հանրային իշխանության մարմինների ընդունած ակտերի, ինչպես նաև հանրային իշխանությանը մասնակցող հասարակական միավորումների գործողությունների համապատասխանությունը սահմանադրությանը ստուգելու միջոց<sup>7</sup>: Սահմանադրական վերահսկողության վերաբերյալ աշխատության մեջ պրոֆեսորներ Հարությունյանը և Մավչիչը ներկայացնում են այն մոտեցումը, որ սահմանադրական վերահսկողության ինստիտուտը հանդես է գալիս որպես պետական իշխանությունների բաժանման, ինչպես նաև հակակշիռների և զսպումների մեխանիզմի իրագործման անկախ երաշխավոր<sup>8</sup>: Մ. Ֆ. Չուրակովը սահմանում է սահմանադրական վերահսկողությունը որպես պետությունների մեծամասնությունում սահմանված կարգ, որի միջոցով անցկացվում է գործող օրենսդրության՝ Սահմանադրության նորմերին համապատասխանության փորձաքննություն (գնահատում)<sup>9</sup>:

Իրավունքի տեսության մեջ ընդունված է սահմանադրական արդարադատության երկու մոդել՝ ամերիկյան և եվրոպական: Ընդունված է համարել, որ սահմանադրական վերահսկողության ինստիտուտը սկիզբ է առել 18-րդ դարի առաջին կեսին՝ Մեծ Բրիտանիայում և կապված է եղել Գաղտնի Խորհրդի գործունեության հետ, որը չեղյալ էր համարում գաղութների լեգիսլատուրաների (օրենսդրական մարմինների) այն որոշումները, որոնք հակասում էին անգլիական խորհրդարանի՝ այդ գաղութների հետ կապված որոշումներին կամ սովորույթա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>3</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, «Սահմանադրական վերահսկողություն» - Հ 422, Եր., «Իրավունք», 2008թ., էջ 10:  
<sup>4</sup> Տե՛ս Кутафин О. Е., «Российский конституционализм», М., Норма, 2008, М., 2011, с. 7-9.  
<sup>5</sup> Տե՛ս [http://moj.am/storage/uploads/A\\_00.pdf](http://moj.am/storage/uploads/A_00.pdf), էջ 36:  
<sup>6</sup> Տե՛ս Лафитский В. И., «Основы конституционного строя США». М.: Изд-во НОРМА, 1998, с. 32-33.  
<sup>7</sup> Տե՛ս «Конституционное (государственное) право зарубежных стран: учебник: в 4 т.» / отв. ред. Б. А. Страшун. М.: БЕК, 1996. Т. 1-2, с. 70- 72.  
<sup>8</sup> Տե՛ս G. Harutyunyan, A. Mavčič, Constitutional review and its development in the modern world (a comparative constitutional analysis), Yerevan-Ljubljana, 1999, p. 13-14:  
<sup>9</sup> Տե՛ս Чудаков М. Ф., «Конституционное (государственное) право зарубежных стран: Учеб. Пособие». Минск, 2001. с. 258-260:



յին կանոններին: Ժամանակակից սահմանադրական վերահսկողության հասկացությունն ի սկզբանե հայտնվել է ԱՄՆ-ում: 1803 թվականին «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործում ԱՄՆ-ի Գերագույն Դատարանը Ջոն Մարշալի ղեկավարության ներքո հայտարարեց, որ Դաշնային Սահմանադրությունը երկրի գերագույն օրենքն է և Կոնգրեսի յուրաքանչյուր օրենք, որը հակասում է Սահմանադրությանը, կարող է հակասահմանադրական ճանաչվել Գերագույն դատարանի կողմից<sup>10</sup>: Հետագայում այդ օրինակը վերցվել է մի շարք լատինաամերիկյան երկրների կողմից (Բրազիլիայում՝ 1891 թվականին, Ուրուգվայում՝ 1917 թվական և այլն): Մինչև առաջին համաշխարհային պատերազմն այդ օրինակին հետևեցին ևս մի քանի եվրոպական երկրներ, մասնավորապես՝ Նորվեգիան և Ռումինիան:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում ստեղծվեց սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի սեփական մոդելը, այն է՝ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված կառույցը, որն այժմ ընդունվել է ավելի քան 100 պետությունների, այդ թվում՝ հետխորհրդային ինքնիշխան պետությունների կողմից<sup>11</sup>: Նշված մոդելի գաղափարը հիմնականում պատկանում է ավստրիացի իրավաբան Հանս Բելգենին, որը Ավստրիայի Դաշնային սահմանադրական օրենքի հիմնադիրներից է: Հ. Բելգենը դատական սահմանադրական վերահսկողության առանձին ինստիտուտի ստեղծումը հիմնավորում էր իր կողմից մշակված «իրավունքի մասին մաքուր ուսմունքի» հայեցակարգով<sup>12</sup>: Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների կոչումը հենց այն է, որ մասնագիտացված սահմանադրական դատարանները ստեղծվեն և գործեն սահմանադրական կարգի հիմունքների, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպա-

նության, Սահմանադրության գերակայությունն ու պաշտպանությունն ապահովելու, Սահմանադրությամբ հռչակված և երաշխավորվող հիմնական քաղաքական ու իրավական արժեքների պահպանման և ապահովման նպատակով:

Մեր կարծիքով, սահմանադրական վերահսկողության եվրոպական մոդելն առավել համակարգված և արդյունավետորեն կարող է լուծում տալ սահմանադրական վերահսկողության առջև դրված հիմնական խնդիրներին, ինչպիսիք են՝ սահմանադրության գերակայության ապահովումը, սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը և իրավունքի գերակայության պաշտպանումը և այլն: Ըստ էության, դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված հաստատությունների առաքելությունը պետությունում սահմանադրական դրույթների գերակայության, գործողության և պաշտպանվածության ապահովումն է՝ դրանով իսկ նպաստելով հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը և սահմանադրական արժեքների ու սկզբունքների առկայությանը հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում:

Պետք է նկատել, որ հենց սահմանադրական դատական վերահսկողությունը նաև հասարակության մեջ կայունության ապահովման միջոց է: Այս առումով հարկավոր է պարզել նաև սահմանադրական վերահսկողության ձևերը: Սահմանադրական իրավունքի տեսությունում ընդունված է սահմանադրական վերահսկողությունն ըստ ձևի բաժանել երկու հիմնական խմբի՝ կոնկրետ և վերացական:

Կոնկրետ վերահսկողությունը բնորոշ է սահմանադրական արդարադատության ամերիկյան մոդելին: Կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմատիվ ակտի սահմանադրականության խնդիրն առնչվում է դատա-

<sup>10</sup> Տե՛ս Kevin M. Stack, “The Constitutional Foundations of Cheney” /Kevin M. Stack//The Yale Law Journal. 2008. № 58, p. 962:

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածը, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125-րդ հոդվածը, Բելառուսի Սահմանադրության 125-րդ հոդվածը, Վրաստանի Սահմանադրության 88-րդ հոդվածը, Ղազախստանի Սահմանադրության 7-րդ հոդվածը, Ղրղզստանի Սահմանադրության 81-րդ հոդվածը, Լիտվայի Սահմանադրության 102-րդ հոդվածը, Լատվիայի Սահմանադրության 85-րդ հոդվածը, Հունգարիայի Սահմանադրության 32ա հոդվածը, Ուկրաինայի Սահմանադրության 147-րդ հոդվածը:

<sup>12</sup> Տե՛ս “Чистое учение о праве Ганса Кельзена” Сб. пер. Вып. 1. М.: АН СССР ИНИОН, 1987, с. 50.

քննության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Այսինքն, տվյալ դեպքում պարտադիր է դառնում նորմատիվ ակտի և կոնկրետ գործի միջև հստակ կապի առկայությունը: Եվրոպական շատ երկրներում նույնպես, հատկապես անհատական դիմումների համակարգի առկայության դեպքում, սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է նաև կոնկրետ վերահսկողության կարգով: Կոնկրետ վերահսկողությունն առավել ընդհանուր բնորոշմամբ բաղկացած է հետևյալ հատկանիշներից՝ իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը կոնկրետ գործին առնչվող իրավասուբյեկտների վրա, անհատական շահերի պաշտպանության խնդրի առաջնայնություն, ընդհանուր իրավասության դատարանների և սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական մարմինների գործառական հստակ փոխհարաբերությունների կանոնակարգվածություն<sup>13</sup>: Հարկ է նշել, սակայն, որ դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական մոդելն ամերիկյան մոդելից հատկապես տարբերվում է վերացական (աբստրակտ) վերահսկողության առկայությամբ: Նշվածը ենթադրում է, որ ցանկացած պահի և անկախ որևէ կոնկրետ գործի քննությունից, օրենքով նախատեսված իրավասու սուբյեկտը կարող է սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնում բարձրացնել նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը: Այսինքն՝ տվյալ դեպքում պարտադիր չէ վիճարկվող նորմատիվ ակտի կապն այս կամ այն կոնկրետ գործին: Միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ վերացական վերահսկողության դեպքում, որպես կանոն, դիմող սուբյեկտները պետական մարմիններն են: Սակայն կան երկրներ, որտեղ ոչ միայն պետական մարմիններն են հանդիսանում վերացական վերահսկողության շրջանակներում դիմող սուբյեկտ, այլ նաև քաղաքացիները: Այսինքն, մարդիկ կարող են դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին ոչ միայն կոնկրետ գործով, որպես կոնկրետ գոր-

ծով սուբյեկտ, այլ նաև որպես վերացական վերահսկողության սուբյեկտ: Նման գործողությունն անհրաժեշտ է դիտարկել *actio popularis* ինստիտուտի տեսանկյունից, որի ապահովման համար պարտադիր պայման է դիմող սուբյեկտի իրավական շահի առկայությունը: Առաջին հայացքից նման դեպքերում իրավական շահի ապացուցման հանգամանքը կարող է խնդրահարույց լինել, քանի որ կոնկրետ նորմի սահմանադրականությունը պարզելու համար քաղաքացին սահմանադրական դատարան է դիմում այն դեպքում, եթե այդ նորմը վերջինիս նկատմամբ չի կիրառվել: Սակայն պետք է նկատել, որ նշված անձը, ինչպես նաև մյուսները երկրում սահմանադրության գերակայության և պաշտպանության ապահովման նկատմամբ ունեն իրավական շահ, ինչը բավարար է տվյալ պահանջը բավարարելու համար: 2011 թվականի հունվարի 27-ի Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի լիազույժար նիստի կողմից հաստատված համապատասխան հետազոտության մեջ անդրադարձ է արվել նաև վերոգրյալ հարցին և նշվել է, որ *actio popularis* ինստիտուտը նախատեսված է Լիխտենշտեյնի, Մալթայի, Պերուի, Խորվաթիայի, Վրաստանի, Բրազիլիայի և այլ երկրների համապատասխան օրենսդրություններով<sup>14</sup>: Պետք է նկատել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունն, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի նշյալ հետազոտությունը, վկայում են, որ *actio popularis* ինստիտուտի նախատեսումը, չնայած իր դրական կողմերին, հանգեցնում է սահմանադրական դատարանների անհարկի ծանրաբեռնմանը: Հետևաբար, կարծում ենք, որ առավել ընդունելի է որպես վերացական վերահսկողության սուբյեկտ դիտարկելու պետական մարմիններին:

Վերացական վերահսկողության դերն առավել կարևորվում է համակարգային անցումային փուլերում գտնվող երկրներում, երբ արմատապես վերափոխվում է օրենսդրական համակարգը, ընդունվում է նոր սահմանադրություն կամ կատարվում են էական սահմանադրական փոփոխություններ: Կարծում ենք, որ

<sup>13</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, «Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում», Եր., «Նժար», 2000թ., էջեր 21-22:

<sup>14</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2010)039rev հետազոտությունը:

վերացական վերահսկողությունն ունի կանխարգելիչ մեծ ներուժ, պաշտպանում է սահմանադրության գերակայությունը նորմատիվ ակտերի նախապատրաստման, ընդունման ու գործադրման բոլոր փուլերում: Վերահսկողության այս ձևը իշխանությունների բաժանման սահմանադրական հաշվեկշռի պահպանման և դրանց ներդաշնակ գործունեության ապահովման երաշխիք է դառնում: Վերացական վերահսկողության համակարգի առավել արդյունավետ գործելու համար նշվածի օբյեկտը պետական իշխանության բոլոր մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերն են:

1995 թվականի հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվեց սահմանադրական մասնագիտացված ինստիտուտի՝ ՀՀ սահմանադրական դատարանի ձևավորումը (1996 թվական) և ամրագրվեցին վերջինիս գործունեության երաշխիքները, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը, դիմող սուբյեկտների շրջանակը և այլն: Սահմանադրության 101-րդ հոդվածով սահմանված էր, որ Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ 1) Հանրապետության Նախագահը, 2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը, 3) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, 4) կառավարությունը՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված դեպքում: Երկրում սահմանադրականության կայացման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, սահմանադրական արդարադատության ամրապնդման և մի շարք այլ կարևոր սահմանադրաիրավական հարցերի համատեքստում սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտների նման նեղ շրջանակի նախատեսումը չէր կարող դրական ազդեցություն ունենալ:

Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում իրականացված սահմանադրական բարեփոխումներով էապես վերանայվեց Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտների ցանկը: Էականորեն ընդլայնվեց Սահմանադրական դատարանի դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչը նպաստեց Հայաստանում սահմանադրական

արդարադատության արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես, ներդրվեց անհատական դիմումի ինստիտուտը, ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված գործերով Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նվազագույն թվաքանակը հասցվեց մեկ հինգերորդի (նախկինում սահմանված մեկ երրորդի փոխարեն), Սահմանադրական դատարանի դիմելու իրավասու սուբյեկտներ ճանաչվեցին նաև տեղական ինքնակառավարման մարմինները, դատարանները, գլխավոր դատախազը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը: Այսպիսով, նշված բարեփոխումներից հետո, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածով հստակ սահմանվեցին ՀՀ Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտները, դրանք են՝

- 1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.
- 6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.
- 7) դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

9) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Հարկավոր է նշել, որ եթե անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումը, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունն է, ապա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածը թվարկում է Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտներին, սակայն չի կոնկրետացնում, թե դրանցից որոնք են վերաբերում կոնկրետ կամ վերացական սահմանադրական վերահսկողությանը: Այս առումով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-80-րդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, թե որ սուբյեկտները, որ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը կարող են բարձրացնել՝ անկախ որևէ կոնկրետ գործի քննությունից, իսկ որոնք՝ ոչ: Այսպես, վերացական վերահսկողություն իրականացնող սուբյեկտներն են՝ Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում, կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի

1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Այսինքն, նշված սուբյեկտները ցանկացած պահի, կոնկրետ նորմի սահմանադրականությունը պարզելու նպատակով կարող են դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին՝ ՀՀ սահմանադրական դատարան:

Պետք է նկատել, որ սուբյեկտների նման շրջանակը *prima facie* (առաջին հայացքից) բավականին լուրջ նախադրյալներ է ստեղծում վերացական սահմանադրական վերահսկողության միջոցով երկրում սահմանադրականության հաստատման գործընթացին նպաստելու համար: Այնուամենայնիվ, չնայած նշված հնարավորություններին, Հայաստանում խիստ մտահոգիչ է վերացական սահմանադրական վերահսկողության արդյունավետությունը: Այսպես, թե 2013 թվականին, թե 2014 թվականին նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան որևէ դիմում չեն ներկայացրել ՀՀ կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ՀՀ Նախագահը դիմել է միայն միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցով: Վերացական սահմանադրական վերահսկողության այլ սուբյեկտները, մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները նույն ժամանակահատվածում ներկայացրել են ընդհանուր առմամբ 15 դիմում: Միաժամանակ նշենք, որ միայն վերջին 6 տարիների ընթացքում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը՝ ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ օրենքների ավելի քան 160 դրույթ է ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Սակայն դրանք հիմնականում քննության են առնվել կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

Ակնհայտ է, որ ներկայիս ազգային իրավական համակարգում առկա ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերն ու դրույթները ոչ միայն օբյեկտիվորեն հակասում են գործող Սահմանադրությանը, չեն համապատասխանում սահ-

մանադրականության՝ որպես Սահմանադրության գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանվածության արժեհամակարգին, այլև խոչընդոտում են հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը և հասարակության բնականոն զարգացմանը: Ուստի, վերացական սահմանադրական վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով իշխանության ու տեղական ինքնակառավարման բոլոր ինստիտուտները պետք է հետևողականորեն իրացնեն վերացական սահմանադրական վերահսկողության իրենց իրավասությունը՝ առերևույթ սահմանադրականության խնդիր առաջացնող նորմատիվ ակտերը և/կամ առանձին դրույթներ ՀՀ սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնելով:

Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառն այն է, որ վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտները, Սահմանադրությամբ երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու իրենց առաքելությունը մեկնաբանում են որպես հայեցողական իրավասություն: Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ հարկավոր է նշված խնդիրը լուծելու նպատակով այն քննարկման առարկա դարձնել սահմանադրական բարեփոխումների շրջանակներում, միաժամանակ որպես ելակետ ընդունելով այն մոտեցումը, որ իրավական պետությունում վերացական վերահսկողության սուբյեկտների կողմից Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական դատարան դիմելը սահմանադրական պարտավորություն է:



**ՋՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,  
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

**ԴԱՏԱՎՃՌԻ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՃՄԱՆ ԱԿՏԻ  
ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆԵԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատավճիռը, հանդիսանալով արդարադատության իրականացման կարևորագույն ակտ, պետք է խստորեն համապատասխանի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին և օրենքներին: Միայն նման դատավճիռը կարող է երաշխավորել անձանց իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությունն ու իրացումը: Հակառակ դեպքում դատավճիռը, որը չի համապատասխանի օրենքում ամրագրված պահանջներին, վերանայման արդունքում վերադաս դատարանների կողմից կբեկանվի և կկորցնի իր իրավական ուժն ու նշանակությունը: Օրինական, հիմնավորված և արդարացի դատավճիռ կայացնելու հիմնախնդիրը ամբողջ քրեական դատավարության ամենակարևոր հարցերից մեկն է<sup>1</sup>:

Վիճակագրական տվյալների ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիների ընթացքում էականորեն նվազել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված՝ գործն էստ էության լուծող ակտերի (որից շուրջ 90%-ը դատավճիռներ են) կայունությունը: Մասնավորապես, 2011 թվականի ընթացքում քրեական գործերով բողոքարկված 1653 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1542-ով (93,3%), որոնցից 198-ը (12,8%) բեկանվել է: 2012 թվականի ընթացքում քրեական գործերով բողոքարկված 1300 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1198-ով (92,2%), որոնցից 219-ը (18,3%) բեկանվել է<sup>2</sup>, իսկ 2013 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարանների կողմից կայացված՝ գործն էստ

էության լուծող դատական ակտերից 1247 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1161-ով (93,1%), որոնցից 286-ը (24,6%) բեկանվել է<sup>3</sup>:

Նշված համեմատական տվյալներն ապացուցում են, որ շատ հաճախ դատարանների կողմից կայացվող դատավճիռները, չհամապատասխանելով այս կամ այն հատկությանը, դրանց ստուգման ընթացքում բեկանվում են: Դրա պատճառը, մեր կարծիքով, ի թիվս այլ հանգամանքների, օրենքով դատավճռին ներկայացվող պահանջների շատ հաճախ սխալ մեկնաբանումը, դրանց բովանդակության թերի բացահայտումը և այլ վերաբերելի հանգամանքների առկայությունն է: Հետևաբար, հարկավոր է առավել մանրամասն ուսումնասիրել դատավճռի հատկությունները՝ պարզելով դրա բովանդակությունը և վերլուծել օրենքով ամրագրված այն հիմքերը, որոնց առկայության դեպքում առաջին ատյանի դատարանների դատական ակտերը բեկանվում են:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռը, բացի օրինական լինելուց, պետք է օժտված լինի նաև հիմնավորվածության հատկությամբ: Այդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

- 1) դատավճռում արված հետևությունները պետք է հիմնված լինեն միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա,
- 2) այդ ապացույցները պետք է լինեն բավարար՝ մեղադրանքը գնահատելու համար,
- 3) դատարանի կողմից հաստատված ճա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>1</sup> Տե՛ս Ворожцов С. А., “Приговор в уголовном процессе: Практик. Пособие”. - М.: Юрайт-Издат, 2003 г, с. 21.  
<sup>2</sup> Տե՛ս [http://www.court.am/files/news/2457\\_am.pdf](http://www.court.am/files/news/2457_am.pdf) (վերջին այցելություն՝ 22.01.2014թ.), Համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2011-2012 թվականների գործունեության վերաբերյալ, էջեր 5-7:  
<sup>3</sup> Տե՛ս [http://www.court.am/files/news/2864\\_am.pdf](http://www.court.am/files/news/2864_am.pdf) (վերջին այցելություն՝ 22.01.2014թ.), Համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2012-2013 թվականների գործունեության վերաբերյալ, էջեր 6-8:



նաչված հանգամանքները պետք է համապատասխանեն դատարանում հետազոտված ապացույցներին:

Այսինքն, օրենսդիրը դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման ակտի հիմնավորվածության հատկության առկայությունը դիտարկել է վերոհիշյալ երեք պահանջների միաժամանակյա համակացությամբ և դրանցից ցանկացածի չպահպանված լինելը, որը վերաքննության փուլում կբացահայտի ստուգող դատարանը, կհանգեցնի դատավճռի բեկանմանը՝ դատավճիռը չհիմնավորված լինելու պատճառաբանությամբ:

Այս առումով, մեր կարծիքով, քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած՝ դատավճռին բնորոշ ցանկացած հատկություն ինքնանպատակ չէ, և դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս թույլ տրվող խախտումները դասակարգելիս հստակ կարելի է տարանջատել, թե տվյալ խախտման հետևանքով դատավճռի որ հատկությանն է, որ դատարանի կողմից կայացված դատավճիռը չի բավարարում: Բացի դրանից, հատկություններից յուրաքանչյուրի բացակայությունն առաջացնում է կոնկրետ քրեադատավարական հետևանքներ, և դրանց մեկը մյուսով կլանելու կամ փոխարինելու թե՛ տեսական, թե՛ իրավակիրառ պրակտիկան, մեր կարծիքով, անընդունելի է: Ուստի, անհրաժեշտ է նաև տարանջատել դատավճռի հիմնավորվածության հատկությունը՝ հստակեցնելով դրա հասկացությունը և ընդգծելով այն խախտումների շրջանակը, որոնք հիմնականում թույլ են տալիս դատարանները:

Այդ կապակցությամբ դատավճռի հիմնավորվածության բովանդակության բացահայտումն ունի մեծ տեսական ու գործնական կարևորություն, ինչը կօգնի սահմանազատել դատավճռի հիմնավորվածությունը հարակից հասկացություններից: Մյուս կողմից հիմնավորվածության հասկացության ճիշտ բնորոշումը կախված է դատարանների կողմից կայացված դատավճիռների որակից, քանի որ հասկացության բովանդակությունում ներառված են այն պահանջները, որոնց պետք է հետևի դատարանը դատավճիռ կայացնելիս:

Ընդհանուր առմամբ, եթե ամփոփենք տեսությունում առկա դատավճռի հիմնավորվածության բնորոշումները, ապա կարելի է եզրահանգել, որ դատավճռի հիմնավորվածությունը նշանակում է, որ դատավճռում արտացոլված դատարանի հետևությունները համապատասխանում են գործի հանգամանքներին, որոնք հաստատվում են դատական նիստում հետազոտված ապացույցների համակցությամբ և դրանք դատարանի կողմից ճանաչվում են որպես բավարար ու թույլատրելի՝ բացառելով այլ որոշման կայացման հնարավորությունը: Դատարանի հետևությունները, որոնք պետք է հիմնավորված լինեն, իրենց մեջ ներառում են այն բոլոր եզրահանգումները, որոնք առկա են դատավճռի թե՛ նկարագրապատճառաբանական, թե՛ եզրափակիչ մասերում:

Սակայն դատավճռի հիմնավորվածության հատկության առավել մանրամասն բացահայտման համար պետք է ուսումնասիրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասում գետեղված չափանիշների բովանդակությունը նույն օրենսգրքի 396-րդ հոդվածի համատեքստում (գործի փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին)՝ որպես չհիմնավորված դատավճռի բեկանման հիմք:

Առավել մանրամասն դիտարկենք դրանք: Մասնավորապես,

«1) դատավճռում արված հետևությունները պետք է հիմնված լինեն միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա»։ իրավաբանական գրականությունում «դատավճռի հիմնավորվածություն» ասելով ավանդաբար հասկացվում է դատավճռում առկա դատարանի հետևությունների համապատասխանությունն այն հանգամանքներին, որոնք հաստատվել են դատաքննության ժամանակ և ամրագրված են դատական նիստի արձանագրությունում<sup>4</sup>:

Դատավճռի հիմնավորվածության հատկությունը միայն դատաքննության ժամանակ

<sup>4</sup> Ст'ю Заблоцкий В. Г., “Обоснованность приговора в советском уголовном процессе”: Автореф. дис.... канд. юрид. наук. Иркутск, 1971, с 6, Строгович М. С., “Курс советского уголовного процесса”. Т. 2. с 325.

հետազոտված ապացույցների պահանջի հետ են կապում նաև մի շարք երկրների քրեադատավարական օրենքներում տեղ գտած նորմերը: Օրինակ՝ էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 305<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն իր դատավճիռը պետք է հիմնավորի միայն դատարանի կողմից հետազոտված ապացույցներով, որոնք կողմերը կարող են ուսումնասիրել և դրանց վերաբերյալ կարծիք հայտնել: Նմանատիպ նորմ է պարունակում նաև Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 512-րդ հոդվածի 2-րդ մասը՝ դատարանը կարող է հիմնավորել դատավճիռը միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով և այն գրավոր փաստաթղթերով, որոնք նշված են եղել քրեական գործը դատարան փոխանցելու մասին որոշման մեջ, կամ այն ապացույցներով, որոնց հետազոտումն օրենսգրքի 125-րդ հոդվածի համաձայն պարտադիր չէ<sup>5</sup>:

«Վճռաբեկ դատարանը ՀՀ Հակոբյանի վերաբերյալ գործով 2010 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ այս կապակցությամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության իմաստով «հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի (...) քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «արդարացի (...) դատաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ դատավարության յուրաքանչյուր մասնակից պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու դատավարական հակառակորդի ներկայացրած ցանկացած ապացույցի և, դատարանի դիրքորոշման վրա ազդելու ակնկալիքով, իր վերաբերմունքը հայտնել դրա առնչությամբ: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքից (...):

«Սահմանադրության իմաստով «իր գործի հրապարակային քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «հրապարակային դա-

տաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ, որպես կանոն, ապացույցների հետազոտումը պետք է իրականացվի հրապարակային դատաքննության պայմաններում: Դա ապահովում է արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վերահսկողությունը, ինչը կարևոր հանրային արժեք է (...)»<sup>6</sup>:

Հետևաբար դատավճռի հիմք կարող են ծառայել միայն այն ապացույցները, որոնք հետազոտվել են դատական նիստում. վերջինս քրեական դատավարության պահանջն է: Որպես այդ հանգամանքն ապացուցող փաստաթուղթ է դատական նիստի արձանագրությունը:

Այս առումով մեզ համար անթույլատրելի է այն մոտեցումը, երբ դատավճիռներում շատ հաճախ նշվում է՝ «Նախաքննական և դատաքննական նյութերով հիմնավորվում է»: Նման տեսակի ձևակերպման դեպքում ստացվում է, որ նախաքննական նյութերը հանդես են գալիս որպես դատավճիռ կայացնելու ինքնուրույն հիմք: Սակայն, ինչպես նշվել է, դատարանն իր հետևությունները չի կարող հիմնավորել նախաքննական նյութերով, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված դեպքերում հրապարակում է դրանք: Սակայն այս դեպքում էլ պետք է նկատել, որ այդպիսի հրապարակումից հետո դրանք նախաքննական նյութերից վերածվում են դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների: Ինչպես իրավագիտորեն նշում է ռուս դատավարագետ Պերլովը. «Այսպես, թե այնպես նշելով դատավճռում, որ դատարանը հաստատված է համարել որոշակի փաստեր կամ հանգամանքներ, նախաքննական նյութերի վրա հիմնվելով, սխալ է և պետք է հրաժարվել նմանատիպ ձևակերպումից<sup>7</sup>»:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2013 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով Գ.Գ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դա-

<sup>5</sup> Խոսքը վերաբերում է հանրաճանաչ փաստերին, այլ դատական ակտերով հաստատված փաստերին և այլ հանգամանքներին:

<sup>6</sup> Տե՛ս Հարություն Արշավիրի Հակոբյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱՔԴ/0128/01/09 որոշման 18-րդ կետը:

<sup>7</sup> Տե՛ս Перлов И. Д., «Приговор в советском уголовном процессе» - М.: Госюриздат, 1960, с. 20.

տապարտել է ազատագրկման 10 (տասը) տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում, որպես ամբաստանյալ Գ.Գ.-ի մեղադրանքը հիմնավորող ապացույցներ, վկայակոչել է տուժողներ Մ.Ռ.-ի և Փ.Ն.-ի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված «ATMAGA-2004-LIGHT» տեսակի (...) գազային ատրճանակը և «Ռենո» մակնիշի (...) պետհամարանիշի ավտոմեքենան: Մինչդեռ, տուժողների նախաքննական ցուցմունքները դատաքննության ընթացքում չեն հրապարակվել, իսկ վերոգրյալ իրեղեն ապացույցները չեն գննվել:

Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով նշված դատավճիռը, իր 2014 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ: Ամբաստանյալի պաշտպանի բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ նշված բողոքը ընդունել է վարույթ՝ իրավացիորեն արձանագրելով. «Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճիռի հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնք հրապարակային դատաքննության ժամանակ չեն հետազոտվել, և որոնց վերաբերյալ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել արտահայտելու իր դիրքորոշումը:

(...)

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատավճռի հիմքում դնել տուժողների՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված ատրճանակն ու ավտոմեքենան, այն պայմաններում, երբ դրանք դատաքննության ընթացքում չեն հետազոտվել:

(...)

Ուստի, նշված ապացույցները պետք է հանել Գ.Գ.-ի մեղադրանքը հիմնավորող ապացույցների զանգվածից<sup>8</sup>»:

Սակայն նշվածից չի կարելի եզրակացնել, որ ցանկացած ապացույց կամ ապացույցներ

դատարանում հետազոտված չլինելու, այսինքն՝ դատավճռի հիմքում անթույլատրելի ապացույցներ դնելու դեպքում, այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի հիմքով անվերապահ ենթակա է բեկանման՝ չհիմնավորված լինելու պատճառաբանությամբ: Եթե նման ապացույցների՝ գործի ապացուցողական զանգվածից հանելուց հետո մնացած ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատվում է անձի մեղավորությունը, ապա դատավճիռը բեկանելու կարիք չի առաջանում: Այդ պատճառով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը պետք է մեկնաբանել սահմանափակ, իսկ նման դեպքում ստուգող դատարանը պետք է գա եզրահանգման, որ դատավճիռը հիմնավորված չէ, եթե անթույլատրելի ապացույցների գործից հանելու պարագայում ապացուցողական զանգվածում առաջանում է չվերականգնվող ճեղքվածք:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ դատարանի դատավճիռը չի կարող հիմնավորված համարվել և ենթակա է բեկանման, եթե դրա նկարագրական-պատճառաբանական մասում բովանդակվող հետևությունները հիմնված են դատաքննության ժամանակ չհետազոտված ապացույցների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ գործով մնացած ապացույցները բավարար են վերջնական եզրահանգման գալու համար: Այլ կերպ՝ դատավճիռը չպետք է էապես հիմնված լինի դատական քննության ժամանակ չհետազոտված ապացույցների վրա:

2) Դատարանում հետազոտված ապացույցները պետք է բավարար լինեն մեղադրանքը գնահատելու համար.

Ինչպես հայտնի է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված չէ «ապացույցների բավարարություն» հասկացությունը և չկա միասնական չափանիշ, թե երբ կարելի է համարել, որ գործով հետազոտված ապացույցները բավարար են ամբաստանյալի մեղքը գնահատելու և հիմնավորված որոշում կայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնա-

<sup>8</sup> Տե՛ս Գուրգեն Իշխանի Գասպարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ին թիվ ԱՎԴ/0102/01/12 որոշման 17-18-րդ կետերը:

լով ապացույցների բավարարության խնդրին, արձանագրել է, որ «ապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են՝ 1) անմեղության կանխավարկածը, 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը, 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը<sup>9</sup>:

Հետևաբար, անձին մեղավոր ճանաչելիս դատարաններն առաջինը պետք է հաղթահարեն անմեղության կանխավարկածը: Անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչներին ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է Մ.Հակոբյանի գործով որոշմանը՝ արձանագրելով հետևյալը. «(...) ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ կերպ ասած՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ՝ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (...):»<sup>10</sup>:

Հետևաբար անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը կնշանակի, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ և կգործի «չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության» հայեցակարգային դրույթը:

Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշին՝ ներքին համոզմունքին, ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) ներքին համոզմունքը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, սակայն այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը (...):»<sup>11</sup>:

Այսպիսով, «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այսինքն՝ այն սուբյեկտը, որը կատարում է ապացույցների գնահատումը, պետք է ունենա գիտակցված և ողջամիտ համոզվածություն իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ: Սակայն նման համոզվածությունը չպետք է հիմնված լինի ինտուիցիայի վրա, այլ պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքներ

<sup>9</sup> Տե՛ս Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-րդ կետը:

<sup>10</sup> Տե՛ս Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը:

<sup>11</sup> Տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԴԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետը:

րի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի ու արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա:

Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշը՝ դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը, ենթադրում է, որ դատարանը վերոնշյալ հարցերը լուծելիս եզրահանգման գալիս պետք է օրենքով նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ հիմնավորի և պատշաճ մակարդակով պատճառաբանի իր հետևությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ «գործի լուծման համար բավարար ապացույցներ» ասելով պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այն համակցությունը, որը կհաղթահարի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը և իր ամբողջության մեջ հնարավորություն կտա կայացնելու հիմնավորված որոշում: Իսկ բավարար ապացույցների բացակայության դեպքում դատարանի դիրքորոշման հիմքում կընկնի «չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի» մեկնաբանելու կանոնը, որը կօգնի եզրակացություններ կատարելու ի շահ ամբաստանյալի (օրինակ՝ սպանությունն ուղղակի դիտավորությամբ կատարված լինելը չապացուցելու դեպքում հիմնավորված կլինի հանցագործությունն անզգուշությամբ կատարելու վերաբերյալ դատարանի եզրակացությունը):

Բացի դրանից, ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանել է նաև այն ակնհայտ դեպքերը, երբ գործով հավաքված ապացույցները չեն կարող համարվել բավարար. «(...) ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

- 1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,
- 2) եղած ապացույցը թույլ չի տալիս պար-

զելու այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում»<sup>12</sup>:

Միայն այս չափանիշների պահպանվածության դեպքում կարելի է խոսել ապացույցների բավարարության և դրա հիման վրա ձևավորված անձի մեղքը հաստատված համարելու չափանիշի մասին: Այս առումով ցանկանում ենք նշել, որ մեղադրանքի ապացուցվածության չափանիշը չի կարող որոշվել գործում առկա ապացույցների թվաբանական ցուցանիշով:

Մեղադրանքի ապացուցվածության չափանիշը դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում վերհանած պատկերացումներ են ապացույցների համակցության վերաբերյալ, որը բավարար է հիմնավորված մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Եթե կոնկրետ քրեական գործով հավաքված ապացույցներն իրենց համակցության մեջ ցածր են գործնականում հաստատված մեղքի ապացուցման չափանիշից, ապա նման դեպքերում պետք է կայացվի արդարացման դատավճիռ: Ընդ որում, մեղքի ապացուցման չափանիշի փոփոխումը կախված է երկրում իրականացվող քրեական քաղաքականությունից:

Ինչպես իրավագիտորեն նշում է Ի.Լ. Պետրոֆինը, «դատավճիռներ կայացնելու համար կիրառված ապացուցվածության չափանիշները չգրված կանոններ են, որոնք կիրառվում են դատավորների կողմից իրենց կյանքի փորձի, դատական պրակտիկայի իմացության և վերադաս դատարանների կողմից իրենց ակտերում ամրագրված օրինականության, հիմնավորվածության և արդարացիության պատկերացման հիման վրա»<sup>13</sup>:

Այսինքն, բացի այն հանգամանքից, որ մեղքի ապացուցվածության չափանիշը կարող է ունենալ օրենսդրորեն ամրագրված կանոններ, նախադեպային իրավունքով հաստատված օբյեկտիվ ու դատավորի անձից կախված, ինչպես նաև այլ սուբյեկտիվ հիմքեր, այն կարող է նաև փոփոխվել՝ կախված երկրում իրա-

<sup>12</sup> Տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 17-րդ կետը:

<sup>13</sup> Տե՛ս Петрухин И. Л., «Оправдательный приговор и право на реабилитацию: монография».-Москва : Проспект, 2013, с. 55-56.

կանացվող քրեական քաղաքականությունից: Այս առումով պետք է նշել, որ այն երկրներում, որտեղ քրեական արդարադատության շեշտը դրվում է դրա պատժողականության վրա, այդ չափանիշները ցածր են, իսկ այն երկրներում, որտեղ անձի՝ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչելու ապացուցվածության շեմը բարձր է, արդարացման դատավճիռների կայացումը հաճախակի կրկնվող պրակտիկա է:

Եթե ընդհանուր առմամբ դիտարկենք, թե ինչ չափանիշներով են ղեկավարվել Հայաստանի դատարաններն անձին մեղավոր ճանաչելիս, ապա ակնհայտ կդառնա, որ թե՛ օրենսդրական, թե՛ դատական պրակտիկայի մակարդակով չկա միասնական հաստատված չափանիշ (բացի անմեղության կանխավարկածից), որը շատ ժամանակ հանգեցնում է օրենքի և դատարանի առջև անձանց անհավասարության: Մասնավորապես՝ համանման փաստական հանգամանքների դեպքում մեկ անձը դատապարտվում է, իսկ մեկ ուրիշը՝ ոչ:

Ինչպես ենթադրվում է, այդ պատճառով ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով մի շարք ներպետական և միջազգային նորմեր, Ա.Ավագյանի որոշմամբ սահմանել է մեղքի ապացուցման չափանիշները, մասնավորապես. «(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազ-

մող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»<sup>14</sup>:

Այսինքն, ՀՀ վճռաբեկ դատարանն օգտագործել է անգլո-սաքսոնական իրավունքի<sup>15</sup>, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի կողմից օգտագործվող՝ մեղքի ապացուցման չափանիշ հանդիսացող «հիմնավոր կասկածից վեր»<sup>16</sup> եզրույթը, որը բացառում է օբյեկտիվ դիտորդի մոտ անձի մեղավորության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ մեղադրանքը գնահատելու «բավարար ապացույցներ» ասելով պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր հանդվածություն անձի մեղավորության վերաբերյալ:

3) Դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները պետք է համապատասխանեն դատարանում հետազոտված ապացույցներին:

Դատարանում ապացույցների հետազոտությունն ինքնանպատակ չէ, այլ ծառայում է կոնկրետ հետևությունները պատճառաբանելուն: Դատարանը դատավճիռ կայացնելիս այդ ակտում կարող է հաստատված համարել բազմատեսակ հանգամանքներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են գործին: Սակայն այդ հանգամանքների հիմքերը պետք է համապատասխանեն դատարանում հետազոտված ապացույցներին, այլ կերպ՝ դատարանի հետևությունների և դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում վերլուծված ապացույցների միջև պետք է լինի խիստ փոխադարձ կապ: Ընդ որում, դատավճռում ցանկացած հետևություն անելիս (պատժի, քաղաքացիա-

<sup>14</sup> Տե՛ս Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

<sup>15</sup> Տե՛ս Joel Samaha, “Criminal Procedure.” Eighth edition, Wadsworth pub. 2012 p 14.

<sup>16</sup> Տե՛ս Dovydas Vitkauskas and Grigoriy Dikov, “Protecting the right to a fair trial under the European Convention on Human Rights.” Council of Europe, Human rights handbooks. Council of Europe, Strasbourg, 2012 p 62.



կան հայցի կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ) դատարանը պարտավոր է հիմնվել կոնկրետ ապացույցների և դրանցից բխող հետևությունների վրա:

Այս առումով անթույլատրելի են այն դեպքերը, երբ գործով հետազոտված ապացույցները վկայում են այլ հանգամանքների մասին, իսկ դատարաններն իրենց հետևությունները հիմնում են ոչ թե այդ ապացույցների, այլ ինտուիտիվ գիտելիքի վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ դատավճիռը, հանդիսանալով քրեական դատավարության ընթացքում կայացվող հիմնարար փաստաթղթերից մեկը, պետք է օժտված լինի հիմնավորվածության հատկությամբ: Դատավճիռի հիմնավորվածությունն հաստատելու համար հարկավոր է օրենքում ամրագրված երեք չափանիշի միանգամյա առկայությունը, որից բխում է, որ դատավճիռը կարող է կայացվել միայն դատաքննության ժամանակ հետազոտված վերաբերելի, թույլատրելի, հավաստի և բավարար ապացույցների համակցության ու այդ ապացույցներից տրամաբանորեն բխեցված հետևությունների հիման վրա:

Բացառություն կարող է կազմել միայն արագացված դատական քննության արդյունքում կայացված դատավճիռը, երբ դատարանն ընդհանուր կարգով ապացույցների հետազոտում չի կատարում, սակայն այս դեպքում էլ պետք է համապատասխանաբար հիմնավորված լինեն մեղմացող ու ծանրացող հանգամանքները կամ արագացված դատաքննության կարգով դատավճիռ կայացնելու համար լուծման ենթակա այլ հարցերը:

Սակայն միայն վերոնշյալ հանգամանքների առկայությունը բավարար չէ արդարադատ դատավճիռ կայացնելու համար: Բանն այն է, որ դատարանը, հետազոտելով որոշակի ապացույցներ և դրանց հիման վրա անելով կոնկրետ հետևություններ, պետք է պատճառաբանի դրանք: Առանց պատշաճ պատճառաբանման դատավճիռի հիմնավորվածությունն ապահովվելու ուղղված ջանքերն ապարդյուն կլինեն, քանի որ միայն ապացույցների հետա-

զոտմամբ, դատավճռում դրանց թվարկմամբ և հետևությունների շարադրմամբ դատավճիռը կլինի թերի ու անհասկանալի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը, դատավճռի օրինականությունից և հիմնավորվածությունից զատ, նշում է նաև, որ դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Համաձայնելով նշված մտքին, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ դատավճռի պատճառաբանման պահանջն իրենից չի ներկայացնում դատավճռի առանձին հատկություն, քանի որ այն սերտորեն կապված է հիմնավորվածության հատկության հետ: Դժվար թե առանց որակյալ հիմքերի կարելի է պատճառաբանել դատավճիռը և հակառակը: Ամեն դեպքում, դատավճռի հիմնավորվածությունն արտացոլվում է դրա պատճառաբանության մեջ: Այս առումով, ինչպես արդարացիորեն նշում է Գ.Ի.Զագորսկին, դատավճռի պատճառաբանվածությունը դրա հիմնավորվածության արտաքին արտահայտման ձևն է<sup>17</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ արտասահմանյան երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրության արդյունքում կարելի է նկատել, որ դրանք նույնպես դատավճռի պատճառաբանվածությունը չեն առանձնացնում որպես դատավճռի հատկություն (կամ դատավճռին ներկայացվող պահանջ): Դրա վառ օրինակներն են Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի առաջին մասը, որի համաձայն դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և արդարացի, ինչպես նաև Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի առաջին մասի համանման կարգավորումը: Այս երկրներում դատավճռի պատճառաբանման պահանջը դիտարկվում է որպես հիմնավորվածության բաղադրիչ:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը զարգացել է այդ ուղղությամբ՝ որպես դատավճռի հիմնավոր լինելու բաղկացուցիչ մաս ամրագրելով նաև դրանում շարադրվող բոլոր հետևությունների և ո-

<sup>17</sup> Стѣн Загорский Г. И., «Постановление приговора: проблемы теории и практики: учебно-практич. Пособие» - Проспект, 2010, с. 37.

րոշումների պատշաճ պատճառաբանված լինելը (նախագծի 353-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ):

Ուստի, ելնելով վերոգրյալից, մեր կարծիքով, դատավճռի պատճառաբանման պահանջը պետք է դիտարկել դատավճռի հիմնավորվածության հատկության համատեքստում՝ որպես դրա բաղկացուցիչ և կենսական մաս:

«Դատավճռի պատճառաբանվածություն» ասելով պետք է հասկանալ դատարանի հետևությունների և որոշումների հիմնավորում՝ անձի մեղավորության կամ անմեղության, հանցագործության որակման, մեղավորների նկատմամբ պատժի նշանակման կամ դրանից ազատման, անմեղներին արդարացման վերաբերյալ, ինչպես նաև՝ այլ հարցերով (քաղաքացիական հայց և այլն)<sup>18</sup>:

Դատական ակտերի պատճառաբանության կարևորությանն է անդրադարձել ՀՀ վճռաբեկ դատարանը Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված՝ եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառա-

բանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման<sup>19</sup>»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանման պահանջին, նշել է, որ արդարացիության կարևոր բաղադրատարր է նաև դատական որոշումների պատճառաբանումը: Այս իրավունքը հիմնվում է ավելի լայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքի վրա, որն անհատներին պաշտպանում է կամայականություններից: Տվյալ իրավունքը ներպետական մարմիններին չի պարտավորեցնում կողմերի ներկայացրած յուրաքանչյուր փաստարկին տրամադրելու մանրակրկիտ պատասխան: Բայց, միևնույն ժամանակ, դատարանների պատասխանը պետք է լինի բավականին մանրակրկիտ կողմի՝ փաստական հանգամանքների կամ իրավունքի պահանջի վերաբերյալ<sup>20</sup>:

Դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ: Դրանում, մասնավորապես, նշված է. «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիության, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական

<sup>18</sup> Տեն Перлов И. Д., «Приговор в советском уголовном процессе»: М.: Госюриздат, 1960, с. 111.

<sup>19</sup> Տեն Ֆրունզիկ Գալստյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 17-19-րդ կետերը:

<sup>20</sup> Տեն «Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործական վերլուծություն», խմբ. Դ.Ավետիսյանի և Վ.Ենգիբարյանի, - Երևան: Աստղիկ, 2013:

պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար»<sup>21</sup>:

Հետևաբար, դատական ակտերի պատճառաբանումն անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիքներից մեկն է, որը դրսևորվում է դատարանների կողմից կայացվող որոշումներով և եզրահանգումներով, ինչպես նաև ներկայացված փաստարկներին պատճառաբանված պատասխան ներկայացնելով: Ավելին, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի, պատճառաբանված դատական ակտի առկայությունը նպաստում է այդ ակտերի օրինականության և հիմնավորվածության առավել արդյունավետ ստուգմանը վերադաս դատական ատյանի կողմից: Այս առումով, ինչպես արդարացիորեն նշում է Յու.Մ.Գրոշեվոյը. «Դատավճռի պատճառաբանումը հնարավորություն կընձեռնի դատարանին ստուգել դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը, քննելու, թե ինչքանով է դատարանի համոզմունքը, որը ընկած է դատարանի եզրակացության հիմքում, համապատասխանում հանգամանքներին, որոնք իրականում տեղի են ունեցել և հաստատվել են դատաքննության ժամանակ<sup>22</sup>»:

Հետևաբար, դատավճռում արված հետևությունների և որոշումների պատճառաբանման պահանջը, հանդիսանալով դրա հիմնավորվածության հատկության բաղադրատարր, կոչված է երաշխավորելու անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Դատարանը դատավճռում պետք է մանրակրկիտ արտացոլի գործով հետազոտված հավաստի ապացույցների բավարար ամբողջության հիման վրա հաստատված փաստերի և իր իսկ որոշումների ու եզրահանգումների փոխկապակցվածությունը և տրամաբանությունը, բացատրի, թե ինչու է եկել այս կամ այն եզրահանգման՝ շարադրելով իր պատճառաբանությունները: Դատարաններն իրենց որոշումներում պետք է պատշաճ անդրադարձ կատարեն նաև այն փաստարկներին, որոնցով դատավարության մասնակիցները հիմնավորում են իրենց դիրքորոշումները: Դրա հետ մեկտեղ դատավճռի պատճառաբանության պահանջը չի կարելի ըն-

կալել միատարր, դրա ծավալը կարող է փոփոխվել գործի բնույթից, հանգամանքներից և այլ պատճառներով: Օրինակ՝ երդվյալ ատենակալների դատարանի կողմից կայացված դատավճռն ընդհանրապես պատճառաբանման ենթակա չէ (բացառությամբ որոշ երկրների), և ատենակալները պարտավոր են պատասխանելու միայն «մեղավոր է» կամ «անմեղ է» հարցերին:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ չպատճառաբանված դատավճռը՝ որպես չհիմնավորված դատավճռի տեսակ, ենթակա է բեկանման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, սակայն, դրա հետ մեկտեղ, այն դեպքերում, երբ ՀՀ վերաքննիչ դատարանը կգա եզրահանգման, որ ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման և դրա հետ մեկտեղ կբացահայտի, որ գործը ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա նման դեպքում վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ինչպես նշեցինք, պատճառաբանման ենթակա են դատավճռում արված բոլոր հետևությունները և որոշումները, բայց հարկ է նկատել, որ նման ձևակերպումը թեև հավաստի է, սակայն լիարժեք պատասխան չի տալիս այն հարցերին, թե կոնկրետ որ եզրահանգումները դատարանը պետք է պատճառաբանի դատավճռ կայացնելիս: Ուստի անհրաժեշտ է ավելի կոնկրետ դիտարկել, թե դատավճռի պատճառաբանման պահանջն ինչ տարրեր է ներառում, որոնց չպահպանումը կազդի դատական ակտի հիմնավորվածության վրա:

Վերլուծելով տեսությունում առկա մոտեցումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան՝ եզրահանգում ենք, որ դատավճռի պատճառաբանման տարրերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- 1) Մեղադրանքի ապացուցմանը վերաբերող պատճառաբանում.
- ա) Պետք է տրամաբանորեն հիմնավորվի, որ գործում հավաքված ապացույցները բա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման 11-րդ կետը:  
<sup>22</sup> Տե՛ս Грошевой Ю. М., «Правовые свойства приговора: акта социалистического правосудия». Харьков, 1978, с. 53.

վարար են՝ դատարանի կողմից կոնկրետ հետևությունների գալու և կոնկրետ որոշումներ կայացնելու համար:

բ) Անհրաժեշտության դեպքում դատարանը հետազոտված առանձին ապացույցների մասով պետք է քննարկի դրանց հավաստիությունը, վերաբերելիությունը, թույլատրելիությունը՝ նշելով, թե ինչու որոշ ապացույցներ դատարանի կողմից հերքվել են:

2. Մեղադրանքի բովանդակությանը (ծավալին) վերաբերող պատճառաբանում.

ա) Դատավճռում պետք է պատճառաբանված լինի, որ ներկայացված մեղադրանքն ամբողջովին ապացուցված է դատական քննության արդյունքներով:

բ) Մեղադրանքը փոփոխելու դեպքում դատարանի այդ որոշումը նույնպես ենթակա է պատճառաբանման:

3. Կատարված հանցագործության որակման վերաբերյալ պատճառաբանում.

ա) Պատճառաբանման ենթակա է դատարանի այն հետևությունը, թե կատարված արարքը քրեական օրենսգրքի որ հոդվածով, դրա մասով կամ կետով է ենթակա որակման:

բ) Առանձին պատճառաբանման են են-

թակա որակյալ հանցակազմի հատկանիշները, եթե դրանք առկա են գործով:

4. Դատարանի կողմից նշանակված պատժի վերաբերյալ պատճառաբանում, որը ներառում է հետևյալ հանգամանքների պատճառաբանման պահանջը.

ա) հանցագործության հանրային վտանգավորությունը,

բ) մեղմացուցիչ և ծանրացուցիչ հանգամանքների առկայությունը,

գ) ամբաստանյալի մեղքի աստիճանը,

դ) ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներից բխող հետևությունները,

ե) տուժողի վերաբերյալ տվյալներից արված հետևությունները, եթե դրանք ազդում են պատժի չափի և բնույթի վրա,

զ) առանձին պատճառաբանման են ենթակա լրացուցիչ պատժի նշանակումը և չափը:

5. Ներկայացված քաղաքացիական հայցի ճակատագրի վերաբերյալ պատճառաբանում.

ա) քաղաքացիական հայցի մասով որոշման պատճառաբանում,

բ) ներկայացված քաղաքացիական հայցի բավարարման ենթակա գումարի չափի պատճառաբանում:



**Tamara Shakaryan**

Head of the Division of Legal Support and European  
Integration of the General Prosecutor’s Office of Armenia;  
Second Class Councilor of Justice;  
PhD in Laws

**Improvement of the Concept of Administrative Liability of  
Legal Entities from the Perspective of Judicial Reforms**

Considering current legal situation on the issue of administrative liability and bearing in mind the existed imperfect and inappropriate ideas, the author argues that the issues, related to administrative liability of legal entities have not been properly solved yet. The adoption of the new Code on Administrative Offences has become the call of the times and is supported by a number of major arguments, which are discussed in the article. With the purpose to make the institute of administrative liability of legal entities more integrated the article touches only those issues, which may be determinant for further implementation of reforms. All gaps in legislation, problems, which need legislative regulations, constitute only a small part of problems. In practice there exist many other problems, which may not even be included in a single legal institution, hence it seems impossible to touch upon all shortcomings of current legislation on administrative offences and means of their solution within one article. Therefore this research just strives to present some conclusions on imposition of administrative responsibility and on the means of their regulation, for providing practically capable structure of provisions of law, practically effective and realistic guarantees for application of inevitability of administrative liability.

**Keywords:** administrative liability, legal entities, judicial reforms, administrative offences

**Թամարա Շաքարյան**

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման  
և եվրաինտեգրման բաժնի պետ,  
արդարադատության երկրորդ դասի խորհրդական,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի  
բարելավման հիմնախնդիրները՝ դատաիրավական բարեփոխումների խորապատկերում**

Ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության և իրավական ոչ համար-  
ժեք պատկերացումների անկատարության պարագայում դեռևս բավարար չափով լուծված չեն  
իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերը: Վարչական ի-  
րավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը դարձել է  
ժամանակի հրամայական և դա պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով, ո-  
րոնք համառոտ ներկայացված են այս հոդվածում: Անշուշտ, մեկ հոդվածի շրջանակներում,  
հնարավոր չէր լուսաբանել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսդրու-  
թյան բոլոր թերություններն ու դրանց վերացման ուղիները, ուստի փորձ է արվել ներկայացնելու  
իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական  
ամրագրման և դրա կարգավորման ուղիների շուրջ որոշ եզրահանգումներ՝ ապահովելու համար  
օրենքի դրույթների կիրառման գործունե կառուցակարգ, իրավաբանական անձանց վարչական  
պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման գործունե և իրական ե-  
րաշխիքներ:

**Բանալի բառեր:** վարչական պատասխանատվություն, իրավաբանական անձինք,  
դատաիրավական բարեփոխումներ, վարչական իրավախախտումներ:

**Արթուր Ղամբարյան**

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

**Սիմոն Սիմոնյան**

ՀՀ ֆրանսիական համալսարանի հիմնադրամի  
իրավաբանական կուրսի ուսանող

**Ցուցմունքի դատական դեպոնացումը որպես անչափահաս տուժողի շահերի և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի հավասարակշռման միջոց**

Սույն հոդվածում ներկայացվում են անչափահաս տուժողների կրկնակի վիկտիմիզացիայի կանխարգելման վերաբերյալ միջազգային փաստաթղթերում արտացոլված մոտեցումները, այնուհետև՝ անչափահաս տուժողի օրինական շահերի և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման զուգակցման նպատակով տուժողի նախաքննական ցուցմունքների դեպոնացման կառուցակարգի կիրառելիության հարցը:

**Բանալի բառեր.** անչափահաս, հարցաքննություն, դեպոնացում, դատավոր:

**Артур Гамбарян**

Заместитель председателя Следственного комитета РА  
Доктор юридических наук

**Симон Симонян**

студент юридического курса в Французском университете РА

**Судебное депонирование показаний как баланс между интересами несовершеннолетнего потерпевшего и права обвиняемого на перекрестный допрос**

В статье соавторы представили депонирование показаний ребенка с точки зрения права обвиняемого на справедливое судебное разбирательство и обеспечения прав и безопасности несовершеннолетнего потерпевшего. Соавторы сравнили правовые нормы регулирующие депонирование показаний ребенка среди некоторых стран Европы, некоторых штатов США. В статье также рассматривалась практика Европейского Суда по правам человека касательно использования депонированных показаний ребенка и права обвиняемого допрашивать показывающих против него свидетелей. Были представлены виды, методы и порядок депонирования показаний ребенка.

**Ключевые слова:** несовершеннолетних, допрос, депонирование, судья.

**Arthur Ghambaryan**

Deputy Chairman of RA investigative committee  
PhD in Laws

**Simon Simonyan**

law student at French University in RA

**Trial deposition testimony as a means of balance between the interests of the minor victim and the defendant's right to cross-examination**

In the article co-authors have introduced deposition testimony of the child with regard to the right of the accused to a fair trial and to ensure the rights and safety of the minor victim. Co-authors compared the legal norms governing the deposition testimony of the child among some European countries, some States in the United States. The article also looked at the practice of the European Court of Human Rights regarding the use of deposited testimony of the child and the right of the accused to examine the witnesses against him. Types, methods and the order of deposition testimony of the child have been presented.

**Keywords:** minor, interrogation, deposition, judge.



**Գևորգ Բաղդասարյան**

ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**Դատարանում մեղադրանքի փոփոխման ռեժիմների հիմքերի տարբերակումը**

Հոդվածը նվիրված է դատարանում մեղադրողի կողմից մեղադրանքի փոփոխման ռեժիմների հիմքերի սահմանազատման հիմնախնդրին: Դրանում հատկապես մանրամասն քննարկվում է դատարանում ի հայտ եկած և մինչդատական վարույթում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքի հիման վրա մեղադրանքը երկու ռեժիմներից յուրաքանչյուրի գործադրմամբ փոփոխելու հնարավորությունը՝ օրենսդրորեն սահմանված «եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու» պայմանի համատեքստում: Վերլուծության արդյունքում հեղինակը հանգում է հետևության, որ այդ պայմանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային մեկնաբանությունը չի համապատասխանում դրա օրենսդրական իմաստին և դատական քննության սահմանների ընդհանուր կանոնին:

**Բանալի բառեր.** մեղադրանքը փոփոխել, դատական քննության սահմաններ, նոր ի հայտ եկած հանգամանք, դատական քննությունը հետաձգել, քննչական գործողություն:

**Геворг Багдасарян**

Заместитель начальника управления поддержания обвинения и обжалования судебных актов Генеральной Прокуратуры  
Кандидат юридических наук

**Разграничение оснований режимов изменения обвинения в суде**

Статья посвящена проблеме разграничения оснований режимов изменения обвинения в суде. В нем особенно подробно обсуждается возможность изменения обвинения на основании вновь открывшихся обстоятельств, в контексте установленном в законе условия “если фактические обстоятельства дела не допускают изменения обвинения без отложения судебного следствия”. В результате автором сделано вывод о том, что комментарий Кассационного суда к содержанию этого условия не соответствует его законодательному смыслу и правилу границ судебного следствия.

**Ключевые слова:** изменение обвинения, границы судебного следствия, вновь открывшиеся обстоятельства, отложение судебного следствия, следственные действия

**Gevorg Baghdasaryan**

Deputy Head of the Department of Criminal Charge and Appeal of Judicial Acts at the General Prosecutor’s Office,  
PhD in Laws

**Differentiation of the grounds laid down in mechanisms of modifying criminal charge**

The article is dedicated to the problems of differentiation of the grounds laid down in the mechanisms of modifying criminal charge. In particular, it is mostly concentrated on the circumstances that have been raised during the trial and have not been known during the pre-trial investigation. This issue has been discussed within the context of the following legal formulation: “if the factual circumstance of the case does not allow modifying the charge without postponing the trial”. As a result

of the analysis, the author comes to the conclusion that the interpretations given in this respect by the Court of Cassation are not in line with the spirit and meaning of the law and the general rule on the boundaries of the trial.

**Keywords:** to modify criminal charge, boundaries of the trial, newly appeared circumstances, to postpone the trial, investigative measure.

\* \* \*

**Հովսեփ Սարգսյան**

ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

**Սամվել Յուզբաշյան**

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների որոշ հիմնախնդիրներ**

Գիտական հոդվածի շրջանակներում քննարկվում է զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտի առնչությամբ իրավակիրառ պրակտիկայում առաջացած որոշ խնդիրներ, ինչպես նաև դրանց արդյունքում, զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու հանցակազմի վերաբերյալ առկա հիմնախնդիրները: Օրենսդիրը, որպես նշված հանցագործության հատուկ սուբյեկտ է ամրագրել «զինվորական ծառայություն անցնող» անձին: Սակայն օրենսդրության վերլուծության և նշված եզրույթի մեկնաբանման արդյունքում իրավակիրառ պրակտիկայում դժվարություններ են առաջանում՝ որոշ հոդվածների կիրառելիության տեսանկյունից: Փաստորեն, դատապարտյալը, չանցնելով զինվորական ծառայություն, հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում ամրագրված հանցագործությունների սուբյեկտ:

Հեղինակների կողմից իրականացվել է ՀՀ և մի շարք արտասահմանյան օրենսդրությունների համեմատա-իրավական ուսումնասիրություն ու կատարվել է օրենսդրական առաջարկ՝ ՀՀ քրեական օրենսգրքի կատարելագործման վերաբերյալ:

**Բանալի բառեր.** զինվորական ծառայություն անցնել, կարգապահական գումարտակ, զինվորական ծառայություն կրել:

**Овсеп Саргсян**

Заместитель начальника управления поддержания обвинения и обжалования судебных актов Генеральной Прокуратуры, советник юстиции 1-ого класса

**Самвел Юзбашян**

Прокурор военной прокуратуры Ереванского гарнизона, кандидат юридически наук

**Некоторые проблемы пресуплений против военной службы**

В рамках данной научной статьи рассматриваются проблемы субъекта преступлений против военной службы, возникшие в правоприменительной практике и, в связи с этим, проблемные вопросы состава самовольного оставления части или места службы. Законодатель закрепил, что субъектом воинских преступлений является лицо «проходящий воинскую службу». Однако, в

результате анализа законодательства и трактовки названного термина в правоприменительной практике возникают трудности, касательно применения некоторых статей. Фактически, осужденный, который не проходит военную службу является субъектом преступлений, закрепленных в главе 32 УК РА.

Авторы проводят сравнительно-правовой анализ законодательств РА и различных зарубежных стран и предлагают законодательное предложение по усовершенствованию Уголовного кодекса РА.

**Ключевые слова:** прохождение военной службы, дисциплинарная воинская часть, несение военной службы

**Hovsep Sargsyan**

Deputy Head of the Department of Criminal Charge and Appeal of Judicial Acts at the General Prosecutor’s Office, first class councilor of justice

**Samvel Yuzbashyan**

Prosecutor at the Office of Military Prosecutor of Yerevan Garnizon

**Some Problems of Crimes against Military Service**

The article discusses problems regarding the subject of crimes against military service, arising in law enforcement and, in this regard, the issues of the structure of unauthorized leave of the military unit or place of military service. Legislator secured that the subject of military crimes is a person ‘serving military service.’ However, as a result of the analysis and interpretation of named term in law enforcement practice arise difficulties regarding the use of some articles. Notably, the convict who does not pass the military service is the subject of the offenses prescribed in Chapter 32 of the Criminal Code of RA.

The authors present comparative legal analysis between the legislation of RA and various foreign countries and make recommendations aiming at the development of the criminal code of RA.

**Keywords:** serving military service, disciplinary military unit carry out military service

\* \* \*

**Արփիինե Հովհաննիսյան**

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Ինքնական կառույցի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**

Հոդվածում կատարված է ՀՀ-ում ինքնական կառույցի իրավական կարգավորման հիմնախնդիրների վերլուծություն: Քննարկվող թեմայի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալու համար ուսումնասիրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, օրենսդրությունը, իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև՝ միջազգային փորձը: Հարկ է նշել, որ ինքնական կառույցների վերաբերյալ դրույթների առկայությունը ոչ միայն նահանջ է օրենքի գերակայության սկզբունքից, քանի որ հնարավորություն է տալիս օրինականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015

էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, այլ նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է մի շարք բարդություններ: Ուստի՝ հողվածում, որպես լուծում, առաջարկվում է բացառել ինքնակամ կառույցի օրինականացման հնարավորությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Բանալի բառեր.** սեփականության իրավունք, ինքնակամ կառույց, սեփականության իրավունքի ճանաչում, ինքնակամ կառույցի օրինականացում:

**Арпине Оганнисян**

Депутат Национального собрания РА  
Кандидат юридических наук, доцент

**Проблемы правового регулирования самовольной постройки в РА**

В статье проанализированы проблемы правового регулирования самовольной постройки в РА. Для полного представления по рассматриваемой теме, в статье были изучены решения Кассационного суда РА, законодательство и правоприменительная практика, а также международная практика. Надо подчеркнуть, что наличие норм о самовольной постройке не только не соответствует принципу верховности закона, так как дает возможность узаконить строение, созданное на земельном участке, не отведенном для этих целей в порядке, установленном законом и иными правовыми актами, либо созданное без получения на это необходимых разрешений или с существенным нарушением градостроительных и строительных норм и правил, но и создает проблемы в практике. В качестве решения проблемы, в статье предлагается исключить возможность узаконения самовольной постройки и признать утратившим силу 188 статью Гражданского Кодекса РА.

**Ключевые слова:** право собственности, самовольная постройка, признание право собственности, узаконение самовольной постройки

**Arpine Hovhannisyan**

Deputy of the National Assembly of RA  
PhD in Laws, Associate Professor

**The problems of legal regulation of unauthorized construction in Armenia**

The article analyzes the problems of legal regulation of unauthorized construction in Armenia. For a complete presentation on the topic, the article studied the decisions of the Court of Cassation, law and practice, as well as international best practice. It should be emphasized that the presence of unauthorized construction in the legislation of RA is inconsistent with the principle of supremacy of law, as it gives the opportunity to legalize a premises constructed on a land not designated for these purposes or (re)constructed without obtaining the necessary permits or material breach of city planning and building regulations. It also creates a lot of problems in practice. As a workaround, the article proposes to eliminate the possibility of legalizing unauthorized buildings and amend the Civil code by recognizing the article 188 null and void.

**Key words:** right of ownership, unauthorized construction, recognition of the right of ownership, legalization of an unauthorized construction

**Արամ Վարդևանյան**

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,  
Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**Վերացական սահմանադրական վերահսկողության նշանակությունը  
սահմանադրականության կայացման գործընթացում**

Տվյալ հոդվածի շրջանակներում հեղինակը ներկայացրել է սահմանադրականության կայացման գործընթացում վերացական սահմանադրական վերահսկողության կարևորությունը: Ներկայացվել են նաև սահմանադրական վերահսկողության սահմանման և նշանակության վերաբերյալ մի շարք գիտնականների մոտեցումները, ինչպես նաև միջազգային փորձում սահմանադրական վերահսկողության մոդելները:

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտներին՝ հեղինակը գտնում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված մոտեցումը բավականին լուրջ նախադրյալներ է ստեղծում վերացական սահմանադրական վերահսկողության միջոցով երկրում սահմանադրականության հաստատման գործընթացին նպաստելու համար: Միաժամանակ ուսումնասիրելով 2013 և 2014 թվականների ընթացքում վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական դատարան ներկայացված դիմումների սակավաթվությունը և հաշվի առնելով նույն ժամանակահատվածում հակասահմանադրական ճանաչված դրույթների զգալի քանակը, հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանում խիստ մտահոգիչ է վերացական սահմանադրական վերահսկողության արդյունավետության մակարդակը:

**Բանալի բառեր.** սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական արդարադատություն, սահմանադրականություն, վերացական սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական դատարան:

**Арам Вардеванян**

Советник председателя конституционного суда РА,  
преподаватель кафедры уголовного права и уголовно-  
процессуального права Российско-Армянского (Славянского)  
университета, кандидат юридических наук

**Значение абстрактного конституционного контроля в процессе становления конституционализма**

В рамках данной статьи автор представил важность абстрактного конституционного контроля в процессе становления конституционализма. Представлены также научные подходы к вопросам понятия и значения конституционного контроля, а также модели конституционного контроля в иностранных государствах. Применительно к субъектам абстрактного конституционного контроля, закрепленного Конституцией РА, автор находит, что гарантированный Конституцией подход создает довольно серьезные основания для становления конституционализма в стране путем абстрактного конституционного контроля. В то же время исходя из малочисленности поданных в порядке абстрактного конституционного контроля заявлений в Конституционный Суд РА в 2013 и 2014гг. и учитывая значительное количество правовых норм, признанных неконституционными, автор приходит к выводу, что уровень эффективности абстрактного конституционного контроля в Армении вызывает сильную тревогу.

**Ключевые слова:** конституционный контроль, конституционное правосудие, конституционализм, абстрактный конституционный контроль, конституционный суд.

**Aram Vardevanyan**

Adviser to the president of the Constitutional court of RA,  
lecturer at the department of criminal law and criminal  
procedural law at the Russian-Armenian (Slavonic)  
university, PhD in Laws

**The role of abstract constitutional review in the process of establishing constitutionalism**

The author presents the importance of abstract constitutional review, in the process of establishing constitutionalism. The role and definition of abstract constitutional review provided by numerous legal scholars and the models of constitutional review based on international practice, have also been presented. Considering the subjects of abstract constitutional review enshrined in the Constitution of RA, the Author finds that the approach established by the Constitution lays significant background for enforcing the process of establishing constitutionalism through abstract constitutional review. At the same time, taking into account the small number of applications submitted to the Constitutional Court in 2013 and 2014, and based on the significant number of the norms recognized unconstitutional, the Author concludes that the level of effectiveness of abstract constitutional review in Armenia, is highly disturbing.

**Keywords:** constitutional review, constitutional justice, constitutionalism, abstract constitutional review, constitutional court.

\* \* \*

**Ջոն Հայրապետյան**

ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

**Դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման ակտի հիմնավորվածության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում**

Հոդվածում բացահայտված է դատավճռի հատկություն համարվող հիմնավորվածության էությունը, նշանակությունը և ուսումնասիրված են այն խախտումները, որոնք հանգեցնում են դատավճռի այդ հիմքով բեկանմանը: Հեղինակը, փորձելով առավել մանրամասն բացահայտել դատավճռի հիմնավորվածության հատկությունը, վերլուծում է դրա բովանդակությունը կազմող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երեք պահանջների էությունը: Մասնավորապես, հոդվածում պատասխան է տրվել այնպիսի առանցքային հարցերին, ինչպիսին են՝ ապացույցների բավարարության հասկացությունը, ինչ չափանիշներով դատարանները պետք է առաջնորդվեն անձի մեղքը հաստատված համարելու համար և այլն: Հեղինակը նշում է նաև, որ դատական ակտերի պատճառաբանումը, լինելով դատավճռին ներկայացվող էական պահանջ, ներառված է վերջինիս հիմնավորվածության հատկության մեջ, քանի որ այս երկու եզրույթները գտնվում են սերտ փոխկապակցության և փոխադարձանավորվածության մեջ: Հոդվածի վերջում հեղինակն առանձնացնում է դատավճռում լուծման ենթակա այն հիմնական հարցերը, որոնք պարտադիր կերպով պետք է պատճառաբանվեն:

**Բանալի բառեր.** դատավճիռ, հիմնավորվածություն, պատճառաբանված, հատկություն, դատական որոշում:

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015



**Джон Айрапетян,**

Помощник судьи Кассационного Суда РА,  
Аспирант Российско-Армянского (Славянского) университета

### **Проблемы свойство обоснованности приговора как акт осуществления правосудия**

В научной статье раскрывается понятие, значение свойство обоснованности приговора и исследованы те судебные ошибки которые влекут отмену постановленного приговора как необоснованного. Автор пытается более подробно раскрыть свойство обоснованности приговора подвергает анализу установленные в ч. 3 статьи 358 Уголовно-процессуального кодекса РА три требований которые составляют стержень обоснованности приговора. В частности, в статье дается ответ таким теоретическим и практическим вопросам как понятие достаточности доказательств, какими стандартами должен руководствоваться суд при установлении вины обвиняемого и др. Автор отмечает также, что мотивированность приговора являясь важным требованием предъявленным к приговору суда в то же время не составляет отдельного свойства и включена в свойство обоснованности приговора т.к. находится с последним в тесной взаимосвязи и взаимообусловленности. В конце автор систематизирует те важные вопросы находящие свое решение в приговоре суда, которые должны быть в обязательном порядке мотивированы.

**Ключевые слова:** приговор, обоснованность, мотивированность, свойство, судебное решение

**John Hayrapetyan**

Assistant to a judge at Cassation court of Armenia,  
postgraduate student of Russian-Armenian (Slavonic) University

### **Issues Concerning the Feature of Reasonableness of the Judgment as a Justice Admission Act**

In the scientific article the concept and the value of the feature of the reasonableness of the judgment is revealed and those judicial errors are explored which result quashing of the judgments as unreasonable. The author, trying to reveal more thoroughly the feature of reasonableness of the judgment set forth in the Article 358 (3) of the Criminal Procedure Code of the Republic of Armenia analyzes three requirements that constitute the core of the validity. Particularly the article provides answers to such theoretical and practical questions as the concept of sufficiency of evidence, what standards should guide the court in establishing the guilt of the accused and others. The author also notes that the motivation of the judgment is an important requirement for the judgment of a court, at the same time not constituting an individual feature, is included in feature of the reasonableness of the judgment because these two notions are closely interrelated and interdependent. In the end, the author systematizes the important findings in the judgment of the court, which must be necessarily motivated.

**Keywords:** judgment, reasonableness, motivated, feature, court decision.

## ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերվի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել [orinakanutyun@prosecutor.am](mailto:orinakanutyun@prosecutor.am) հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝ ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի այն տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 87 2015